Azg Ազգ

19 ՅՈՒՆԻՍ 2013 ՇԱԲԱԹ 102(5185)

ISSN: 1829-1651

# Ռուսաստանը 1 մլրդ դոլարի զենք է մատակարարում Ադրբեջանին

**Անցյալ շաբաթավերջին համացանցում հայտնվեցին նավահանգստում տանկերի եւ ցամաքային զորքերի այլ զինատեսակների բեռնաթափման ու տեղափոխման լուսանկարներ: Ըստ milkavkaz.net կայքէջի, այդ տեխնիկան կարող է ցուցադրվել հունիսի 26-ին Բաքվում՝ Ադրբեջանի զինված ուժերի օրվան նվիրված զորահանդեսի ժամանակ:**

**ՌԴ պաշտպանության նախարարության աղբյուրներ վկայակոչելով՝ «Վեդոմոստի» թերթը գրում է, որ լուսանկարները իսկական են եւ արտացոլում են ցամաքային ռազմական տեխնիկայի մատակարարումները՝ Ադրբեջանի հետ 2011-2012 թթ. ստորագրված պայմանագրերի փաթեթին համապատասխան:**

**Թերթի տվյալներով, խոսքը T-90 տիպի 94 տանկի, մոտ 100 հատ БМП-3 հետեւակի մարտամեքենայի, 18 հատ «Мста-С» հրետակայանքի, համազարկային կրակի 18 «Смерч» արձակման կայանքի, «Вена» տիպի 18 ինքնագնաց հրետանու եւ ТОС-1А «Солнцепек» տիպի 6 ծանր հրանետային համակարգի մասին է: Զինամթերքը ներառյալ, պայմանագիրը գնահատվում է մոտ 1 մլրդ դոլար:**

**Փորձագետները նշում են, որ այդ մատակարարումները Ռուսաստանին թույլ են տալիս իր ազդեցության տակ պահել Ադրբեջանին եւ կրճատում են Բաքվի գնումները միջազգային շուկայում:**

**Ադրբեջանը զենք է գնում նաեւ այլ երկրներից, մասնավորապես Իսրայելից: 2012-ին կնքվեց 1,6 մլրդ դոլար ընդհանուր արժեքով երկու խոշոր գործարք (տասնյակ անօդաչու ինքնաթիռներ, արդիական ռադարներ եւ այլ սպառազինություն): 2012-ի ամռանը հաղորդվեց, որ Ադրբեջանը կարող է իր բանակի ռուսական ինքնաձիգները փոխարինել իսրայելական «Տավորներով»:**

**Պ. Ք.**

# Արեւային էներգիան ընդդեմ թանկացող գազի

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Էլեկտրաէներգիայի եւ գազի թանկացման ու համաշխարհային ճգնաժամի պայմաններում հելիոֆիկացիան դարձել է ոչ միայն այլընտրանք, այլեւ ողջ աշխարհի ճակատագիրը»: Բնորոշումը պրոֆեսոր **Վահան Համազասպյանինն** է, ում գլխավորությամբ էլ երեկ Թեֆեյան կենտրոնում տեղի ունեցավ «Հելիոֆիկացիա՝ այլընտրանքային էներգիայի գլխավոր աղբյուրը» թեմայով գիտաժողովը, նախաձեռնությամբ Ռամկավար ազատական կուսակցության:

Արդեն 10 տարի ֆնարկումներ են ընթանում հելիոսարքերի արտադրության գործարանի բացման վերաբերյալ: Այն նախատեսվում է բացել Սոֆիտակի նախկին վերելակաշինական գործարանի շենքում: Դրա համար կպահանջվի 700 մլն դրամի ներդրում: Ըստ Վահան Համազասպյանի՝ այդ կերպ ԱԷԿ-ից 5 անգամ ավելի շատ էներգիա կկարողանանք ստանալ: Նախատեսվում է օրական արտադրել 1000 կոմպլեկտ 5 կվատ հզորության սարքեր, արժեքը կլինի 400-600 դոլարին մոտ: Դա ամենաէժան գինն է արեւային էներգիայի օգտագործման դեպքում: Համազասպյանը վստահ է, որ Հայաստանի 350.000 գյուղացիական տնտեսությունների պահանջարկը գործարանը կբավարարի:

Այս առաջարկությունը դեռեւս տարիներ առաջ գիտնականը ներկայացրել է թե՛ կառավարությանը, թե՛ նախագահին: Սակայն որեւէ կոնկրետ պատասխան կառավարությունից չեն ստացել: Վերջին շրջանում գազի թանկացման ֆոնին արեւային էներգիայի գաղափարը կրկին դարձավ արդիական:

Տես էջ 2

# ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան դարձել է Համաեվրոպական ակադեմիաների (ALLEA) անդամ

**ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան դարձել է Համաեվրոպական ակադեմիաների (ALLEA) անդամ: ALLEA-ն հիմնադրվել է 1994 թվականին, գիտությունների ազգային ակադեմիաների ֆեդերացիա է, որը միավորում է 40 եվրոպական երկիր: ALLEA-ի անդամ կազմակերպությունները գիտնականների եւ հետազոտողների ինքնակառավարվող միավորումներն են, ինչպիսիք են գիտական հիմնադրամները, հետազոտական ինստիտուտները, նորարարական կենտրոնները եւ գիտական ընկերությունները:**

**ALLEA-ին անդամակցելը հայ գիտնականների համար նոր հնարավորություններ կընձեռնի գիտական փոխանակման, միջազգային հետազոտական ծրագրերում ընդգրկվելու առումով:**

# Մկանների ցուցադրում տարբեր ուղղություններով

ՄԱԲԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերահսկիչ պալատի՝ 2012 թվականի բյուջետային միջոցների վերահսկողության հաշվետվության խորհրդարանական քննարկմանը կողից հետեւողների համար, բուն բովանդակային իրողություններից զատ, մի շարք այլ իրողություններ էին աչքի զարնում: Նախ՝ ողջ գործընթացը վերածվել էր իշխանության տարբեր շերտերի՝ միմյանց գամերը ձգելու արարողության, դա պարզ երեւում էր այն ժամանակ, երբ փոխվարչապետ **Արմեն Գեւորգյանն** ու արդարադատության նախարար **Հրայր Թովմասյանն** իրենց անհամաձայնությունն էին հայտնում ՎՊ հաշվետվության որոշ եզրահանգումներին, եւ արդա իշխանական մեծամասնության ներկայացուցիչների ելույթների ժամանակ հատկապես: Որ իշխանական տարբեր թեւեր էին մրցակցում, դա երեւաց անգամ ՀՀԿ խմբակցության տեսակետը եզակի անգամ ներկայացրած **Հովիկ Աբրահամյանի** ելույթից, ով փաստորեն մկաններ էր ցույց տալիս նվազագույնը երկու ուղղություններով՝ կառավարության եւ ՀՀԿ ներսում իր չուզողների: Ընդ որում՝ բոլոր իշխանականները մեջբերում էին հենց նախագահ Սարգսյանի՝ «ատկատների» եւ կոռուպցիայի դեմ պայքարելու վերաբերյալ ելույթներից: Թե ում մեջբերումներն էին ավելի առարկայացված՝ դեռ պարզ չէ, հետո կերեւա:

Տես էջ 2

# Շիլլիի հայկական գերեզմանոցը՝ ցուցարարների եւ ոստիկանության բախումների թատերաբեմ

Թեեւ հունիսի 16-ին՝ վարչապետ Էրդողանի սամբուլյան հանրահավաքի օրը, թուրքական ոստիկանությունը ցուցարարներից ազատել էր Թաքսիմի հրապարակն ու «Գեզի» զբոսայգին, սակայն բախումները դեռեւս շարունակվում են տարբեր թաղերի փողոցներում: Այդպիսի թաղերից է մասամբ հայերով բնակեցված Շիշլին, որտեղ ոստիկանության եւ ցուցարարների բախումների թատերաբեմ է դարձել Շիշլիի հայկական գերեզմանոցը:

Այդ մասին նախորդ օրը, հենվելով թուրքական aykiridogrular.com էլեկտրոնային թերթի վրա, տեղեկացրել է Սամբուլի «Հայթերթ» կայքէջը: Ըստ տեղեկության, ոստիկանությունը ներխուժել է գերեզմանոց, թակարդ է լարել ցուցարարների դեմ, եւ գերեզմանատարերի արանքից արցունքաբեր գազ է արձակել նրանց վրա:

Թուրքական էլեկտրոնային թերթը դա համարել է անարգանքի դրսեւորում, դատապարտել է ոստիկանությանը եւ, ինչպես «Հայթերթն» է նշում, ավելացրել. «Թուրքիայի վարչապետ Էրդողանն ու նրա կողմնակիցներն աղմուկ-աղաղակ էին բարձրացնում, թե ցուցարարները ներխուժել են մզկիթ եւ այնտեղ օգտագործել ալկոհոլային խմիչք: Մինչդեռ մզկիթում վիրավորներ էին, նրանք այնտեղ էին ապաստանել ոստիկանության հետապնդումից խուսափելու նպատակով: Սակայն երբ խոսքը վերաբերում է Շիշլիի հայկական գերեզմանոցին, թուրքական պետությունն ու ոստիկանությունը խնդիր չեն տեսնում ներխուժելու եւ գերեզմանոցը որպես թակարդ լարելու վայր, թափսոց օգտագործելու մեջ որպեսզի արցունքաբեր գազ կիրառեն ցուցարարների դեմ: Կարծում ենք, պետությունն ու ոստիկանությունը պետք է անհապաղ ներողություն խնդրեն հայ ժողովրդից, գոնե մի փիչ մեղմելու համար այս անարգանքի տպավորությունը: Գերեզմանոցները չեն կարող որպես թափսոց ծառայել անվտանգության ուժերի համար»:

Հ. Ջ.

# Խաղաղության կոչին Ադրբեջանում հակադրում են «մարդասպանների հերոսացումն ու խաղաղության կոչ անողների հետապնդումները»

*Հայտարարությունները մնում են թղթի վրա*



«Հայաստանը համանախագահ երկրների հետ միասնական եւ վճռական է հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը հասնելու նպատակով», էնիսկիլենում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ երեկ արված համատեղ արդեն հինգերորդ հայտարարության առնչությամբ այսպիսի դիտարկում է արել Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն իր մեկնաբանության մեջ:

Տես էջ 3

ԱԶԳ

# Ընթացիկ

# Կարգավիճակ երկրապահ կամավորականներին

Երեկ Ազգային ժողովի նիստում Երկրապահ կամավորականների միության նախագահ, Ազգային ժողովի պատգամավոր **Մանվել Գրիգորյանն** ունեցել է իր առաջին պատգամավորական ելույթը: Դա տեղի է ունեցել «Երկրապահ կամավորականների կարգավիճակի մասին» իր, Սեյրան Սարոյանի եւ Սամվել Ֆարմանյանի հեղինակած օրենքի նախագծի քննարկման ժամանակ: Այս նախագծով, որ երեկ 99 կողմով առաջին ընթերցում անցավ, սահմանվում է, որ երկրապահ կամավորական են համարվում 1989-1994 թվականներին երկրի սահմաններում կռված, ինչպես նաեւ մարտական գործողությունների ժամանակ վիրավորված եւ զոհված անձինք: Գեներալ Մանվելն իրեն հատուկ ոճով ելույթում նշեց, թե հատուկ իրավունքներից այսօր 85 հազար մարդ է օգտվում, դրանց 35 հազարը ազատամարտիկներ են թեեւ, բայց կամավորականներից շատերը դուրս են մնացել այդ ցուցակներից:

Նա ասում էր՝ «Մազը (խոսքն Արմեն Մազմանյանի մասին է) իր ջոկատով մնացել է դուրս», «Դաշնակցության տղաները, որ մեզ հետ հավասար կռվել են, չեն գրանցվել»: Ու հետո Առաքել Մովսիսյանին վկայաբերեց՝ «Շմայսը վկա», թե ինչպես առաջին օրերին ռազմի դաշտ գնացածները հաճախ՝ «մինը, գրանատը, փամփուշտներն իրարից չէին տարբերում», ու որքան վիրավոր ու զոհ են հետ ուղարկել: Նա ասում էր, որ զինվորականները իրենց համար սահմանված լիազորություններից օգտվում են, իսկ այս օրենքը կամավորականների մասին է, ու սա նույնիսկ ոչ թե սոցիալական ենթատեքստի, այլ հարցի բարոյական կողմի խնդիր է.«Դրանց ոչ փողն ա պետք, ոչ էլ... ինչքան էլ անենք այդ ազատամարտիկների համար, քիչ ա: Երկրապահը Մանվելի սեփականությունը չէ, ՀՀ-ինն է: ՀՀՇ-ի, Դաշնակցության տղաներն են եկել, ջոկատ կազմել: Նույն կամավորականներ են Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Աբրահամյան Հովիկն ա, վարչապետն ա, մենակ զինվորը չէ, որ կռակել ա: Ես ուզում եմ, որ այն, ինչ ժողովրդինն է, վերադարձնենք իրենց: Ես ուզում եմ իշնեմ, հասնեմ իմ ընկերներին, որոնք շարքային են, իրավունք չունե՞մ: Ես չեմ ուզում գեներալ-լեյտենանտ լինեմ, ՀՀ առաջին ասպիճանի մարտական խաչը ես եմ ստացել, Արցախի հերոս եմ, բայց չեմ ուզում սանամ, չեմ ուզում իրենցից բարձր լինեմ: Ինչ կա էս երկրում շարժվող եւ անշարժ, Հայաստանի Հանրապետությանն է: Խնդիրն էն չէ, թե ով ա նախագահը, ով ա վարչապետը, փոխվելու են մի ամիս հետո, թշնամություն մի արեք, էգուց տղա-աղջիկ եք պսակելու, բարեկամաք»:

Այստեղ խառնվեց Ազգային ժողովի նախագահը. «Մեկ ամիս հետո որ ասացիր՝ մարդկանց մեջ ուրախություն առաջացավ»: Մ. Գրիգորյանն էլ կատակով պատասխանեց, թե չի ասել որ ամսվա որ օրը, ու նույն ոգով շարունակեց, թեեւ իր խոսքի ժամանակը լրացել էր: Ու Հ. Աբրահամյանին մի քանի անգամ հարկ եղավ զգուշացնել Մ. Գրիգորյանին, ու ի վերջո է. Շարմազանովի զգուշացումից հետո միայն գեներալ Մանվելն իջավ ամբիոնից, նրան ինչպես երեւում էր, շատ էր դուր եկել ԱԺ ամբիոնից խոսելը:

Իսկ օրենքը սկզբնապես ներկայացրած **Սամվել Ֆարմանյանն** իր ելույթում նշել էր, թե նախագիծն անհրաժեշտ է ոչ միայն երկրապահ կամավորականներին, այլեւ բոլորիս՝ ճիշտ ուղու վրա պահելու համար մեր արժեհամակարգը, եւ նպատակ ունի օրենսդրորեն սահմանել «երկրապահ» եւ «երկրապահ կամավորական» հասկացությունները, երկրապահ կամավորականին կարգավիճակ տալու կարգը: Սոցիալական երաշխիքների մասին նախագծում խոսք չկա: Փաստորեն այս օրինագծով պետության մեջ ճանաչվում է կամավորականությունը որպես երեւույթ, եւ սա մի տեսակ բարոյական փոխհատուցում է կռված տղաների (նաեւ կրակի գծում աշխատած այլ մասնագիտությունների տեր մարդկանց հանդեպ), քանի որ, ըստ Ֆարմանյանի, Արցախի գոյամարտին կամավոր միացած մեր քույրերն ու եղբայրները մինչեւ այժմ հատուկ կարգավիճակ չունեն:

Ելույթ ունեցող պատգամավորները բոլորն էլ կողմ էին օրինագծին, սակայն նշում էին տեխնիկապես թերի կողմերը, որոնք օրենքը գործածելիս ի հայտ կգան:

**Մ. Խ.**

# Մկանների ցուցադրում տարբեր ուղղություններով

*1-ին էջից*

Բայց Հ. Աբրահամյանի ասածի ուղղվածությունը պակաս կներկայանա, եթե չասենք, որ ՀԱԿ-ի ցուցակից, բայց չգիտենք՝ արդյո՞ք ՀԱԿ-ը ներկայացնող Նիկոլ Փաշինյանը մի այնպիսի թունդ ելույթ ունեցավ, որով կոռումպացվածության մեջ էր մեղադրում բոլոր իշխանավորներին, այդ թվում հենց Հովիկ Աբրահամյանին, Իշխան Զաքարյանին, Վարդան Այվազյանին, վարչապետ Տիգրան Սարգսյանին եւ այլոց՝ խորհուրդ տալով ՎՊ-ին նրանցից (իրենցից) սկսել. «Այս իշխանությունը հա՛մ կոռումպացված է, հա՛մ պայքարում է կոռուպցիայի դեմ, հա՛մ մեծացնում է աղքատությունը, հա՛մ պայքարում է աղքատության դեմ, հա՛մ 2008 թ. մարտի 1-ին գնդակահարել է ՀՀ քաղաքացիներին, հա՛մ շահագրգռված է այդ սպանությունները բացահայտելու մեջ, հա՛մ քաղաքացիներին սիրողում է արտագաղթել, հա՛մ պայքարում է արտագաղթի դեմ: Այսպիսով՝ նրանք գոլորշի են բաց թողնում եւ կոռուպցիայի դեմ պայքարը մտցնում փակուղի», ասաց:

Իսկ ահա ԱԺ նախագահն, իր խոսքով՝ չտրվեց Ն. Փաշինյանին պատասխանելու գայթակղությանը, նշելով, որ վերջին օրերի սուր քննարկումներն ԱԺ-ում տեղավորվում են ժողովրդավարության շրջանակում, ու քաղաքական մեծամասնությունն ինքն է խոսում իր սխալների մասին: Նա ասում էր, որ ՀՀԿ ղեկավարը որեւէ պայմանավորվածություն չունի որեւէ նախարարի կամ ղեկավարի հետ, դրա համար՝ «մենք ակնկալում ենք, որ պատկան մարմինները պատասխանատվության ենթարկվեն» ու «զարմանում ենք, որ իմ զարմանքը որոշ մարդկանց զարմացնում է»: Թեեւ՝ մյուս կողմից էլ նշեց հաշվետվությունում առկա որոշ անհամապատասխանությունների մասին: Ու առաջարկեց իր մոդելը՝ որ ՎՊ հաշվետվությունները նախ քննարկվեն ԱԺ հանձնաժողովներում, գործադիրի եւ դատախազության ներկայացուցիչների մասնակցությամբ, դրա համար էլ օրենսդրական փոփոխություններ առաջարկեց: Ըստ նրա՝ ԱԺ մեծամասնությունը պատասխանատվություն է կրում կառավարության համար, այնպես որ ՎՊ հաշվետվության եւ կառավարության գործունեության նկատմամբ դեր պետք է ունենա: Ապա եւ արեց իր գլխավոր առաջարկը՝ ՎՊ հաշվետվությունն ուղարկել դատախազություն՝ կառավարությունն ու ՎՊ-ն չարաշահումներն հիմնավորող ու ապացուցող մարմին չեն:

Իհարկե, ՎՊ հաշվետվության քննարկմանը զուգահեռ ընթացող իշխանության տրանսֆորմացիայի երեւակումներին դեռ կարելի անդրադառնալ, թեեւ դրանցից ուշադրությունը երեկ ԶԼՄ-ներով շեղվեց դեպի **Վարդան Այվազյանի** եւ **Արամ Մանուկյանի** լեզվակռիվը, որը Ազգային ժողովի դահլիճից տեղափոխվեց միջանցք: Ու անգամ դրան ակամա մասնակից դարձավ լրագրող **Գոհար Վեզիրյանը**՝ այդ լեզվակռվի մեջ էթիկայի հանձնաժողովին բաժին կտոր էլ կար, երբ Վարդան Այվազյանը լրագրողին ասում էր՝ մի վնգստա, իսկ նա Այվազյանին՝ բոմժ:

Ամենահետաքրքրականն այն էր, որ ՎՊ նախագահ **Իշխան Զաքարյանը**, իր ամփոփիչ ելույթում նոր օրինակներով ամրապնդելով իրենց բացահայտումները, եւ ասելով, որ դրանց դեմ պայքարի կոչ ավելի վաղ անցկացված խորհրդակցություններում արել է նախագահ Սարգսյանը, տարանջատվեց հատկապես ընդդիմադիր պատգամավորների «համատարած թալան» հաճախ ինչպես եզրույթից, թե հաշվետվության մեջ ո՞րտեղ կա նման բան գրված, կամ որտե՞ղ կա քաղաքական ենթատեքստ:

ՀԵԼԻՈՖԻԿԱՑԻԱ

# Արեւային էներգիան ընդդեմ թանկացող գազի

*1-ին էջից*

Տնտեսագիտության դոկտոր **Թաթուլ Մանասերյանը** ուսումնասիրել է առաջարկությունը: Տնտեսագիտական առումով՝ կողմ փաստարկները գերակշռում են, դեմ փաստարկներ որպես այդպիսին չի լսել եւ ցանկանում է հասկանալ, թե ինչո՞ւ է կառավարությունն անուշադրության մատնում այս գաղափարը: Մանասերյանն օրինակ է բերում Թուրքիայի թերզարգացած շրջանները, որտեղ բնակիչներն օգտվում են միայն արեւային էներգիայից: «Եթե Թուրքիայի թերզարգացած շրջաններում են հասել այդ մակարդակին, ինչո՞ւ մենք չենք կարող օգտվել այդ նույն կլիմայից եւ արեւից»: Մանասերյանը կարեւորում է, որ արեւային էներգիան հատկապես լուրջ օգնություն կլինի գյուղական վայրերի համար, եւ այդ կերպ սոցիալական բեռն էլ կթոթափվի:

«Գաղափարի իրագործման համար անհրաժեշտ է պետության եւ մասնավոր կառույցների խառը ներդրումային հիմնադրամի ստեղծում, եթե, իհարկե, հակափաստարկներ չկան», ասաց Մանասերյանը:

«Հակափաստարկներ չկան», ասաց Համազասպյանը՝ հավելելով, որ որեւէ լուրջ հակափաստարկ կամ քննադատություն իր առաջարկության հետ կապված չի լսել: Մանասերյանը ասում է, որ վերջերս Բրյուսելում Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակներում ներկայացրել է արեւային էներգիայի գաղափարը, ինչը շատ լավ է ընդունվել: Բնապահպան **Կարինե Դանիելյանն** էլ փաստում է, որ բազմաթիվ միջազգային ամբիոններից էկոլոգիական տեսանկյունից ներկայացրել է գաղափարը, որն արժանացել է հավանության:

«Ար եւ արեւ» ընկերության տնօրեն **Արա Պետրոսյանի** մեկնաբանությամբ՝ ամբողջ Եվրոպան այսօր իր հայացքը թեքում է դեպի արեւային էներգիան: Ի տարբերություն Հայաստանի՝ Եվրոպան 1,7 անգամ քիչ է արեւային էներգիա ստանում, սակայն արեւային էներգիան Գերմանիայի էներգետիկայի 6 տոկոսն է կազմում, Իտալիայի՝ 8, իսկ Բուլղարիայի՝ 4: «Այսինքն, եթե մենք սկսենք արեւային էներգիան որպես այլընտրանք ներկայացնել, ապա 1,7 անգամ ավելի շատ օգուտ ենք ստանալու, քան Եվրոպայում»:

Բացի այլընտրանքային էներգիայից՝ Համազասպյանը հավաստիացնում է, որ արեւային էներգիայի միջոցով պատրաստված սնունդը չի առաջացնում քաղցկեղ եւ շատ ավելի համեղ է: Արեւային էներգիայով պատրաստված մթերքները մեծ արդիականության են վայելում Եվրոպայում: **Ռուդոլֆ Հովհաննիսյանը** եվրոպական բազմաթիվ երկրներում եւ ԱՄՆ-ում հաճախ է մասնակցել ցուցահանդեսների եւ ներկայացրել արեւային էներգիայով վերամշակված մրգեր: Հատկապես ֆրանսիացիներն այնքան են հավանել հայկական չրերն ու քացրավենիքը, որ դրանք ցուցադրվել են մի քանի քաղաքներում: Բացի յուրահատուկ համից՝ արեւային էներգիայի միջոցով հնարավոր է լուրջ խնայողություններ կատարել: Օրինակ՝ 3 կգ մրգից մեկ կիլոգրամ չիր է ստացվում, ինչը Եվրոպայում վաճառվում է 60-70 եվրո:

Քննարկումը, որը տեւեց շուրջ 3 ժամ, գրավել էր շատ մասնագետների, հեղինակավոր գիտնականների, որոնցից շատերը ունեցան հետաքրքրական ելույթներ, արեցին բազմաթիվ առաջարկներ: Դժբախտաբար բացակայում էին կառավարության ու գերատեսչությունների ղեկավարները, հակառակ որ կազմակերպիչները հրավիրել էին նրանց:

Քննարկման ընթացքում մասնակիցները որոշեցին ստեղծել աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված կլինեն կառավարության ներկայացուցիչներ, գիտնականներ, ներդնողներ, եւ վերջնական լուծում տալ այս խնդրին:

***Հ. Գ. - Երեկ քննարկմանը ներկա էին նաեւ մի շարք քաղաքացիներ, ովքեր, հաշվի առնելով գազի թանկացումը, եկել էին՝ հասկանալու, թե որտեղից կարող են գնել կայաններ արեւային էներգիա ստանալու համար: Ցավոք, նրանք հիասթափվեցին, քանի որ գաղափարի հեղինակներն ասացին, որ դրանք չեն վաճառվում, գիտական գաղտնիք է, եւ առայժմ չի հրապարակվում, մինչեւ պետությունը որոշում չկայացնի: Կարծում ենք, այս իրավիճակում, ճիշտ կլինի առաջնորդվել նաեւ բիզնես մտածողությամբ. գյուղը գրանցել որպես մշակոր սեփականություն, ուսումնասիրել շուկան եւ վաճառել կայանները: Վստահաբար՝ հասարակության մի զգալի հատված կգնի կայանները:***

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայ-հնդկական հեռանկարներ

Ժամանակն է նայելու դեպի արեւելք, իսկ ավելի որոշակի՝ դեպի Հնդկաստան. այս գաղափարին համամիտ են հայ-հնդկական հարաբերություններով հետաքրքրված եւ այդ հարաբերություններն ամրապնդելուն կոչված անձինք, որոնց մի փոքր մասը հունիսի 17-ին «Կոնգրես» իյուրանոցում կազմակերպված կոնֆերանսի ժամանակ հանդես եկավ հայ-հնդկական հարաբերությունները զարգացնելու իր գաղափարներով ու առաջարկներով:

Կոնֆերանսի կազմակերպիչը «Հայ-հնդկական բարեկամություն» կազմակերպությունն էր, իսկ ընտրված թեման էր՝ «Հայ-հնդկական հարաբերություններ. մարտահրավերներ ու հեռանկարներ»:

Մշակույթի, կրթության, գիտության, առեւտրի, սպորտի, բիզնեսի ու այլ ոլորտների ներկայացուցիչների, նաեւ տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ծավալված քննարկման ընթացքում փոխանակվեցին առաջարկներ, որոնք հետագայում թերեւս ներգրավվեն համագործակցության ծրագրերում:

Քանի որ կոնֆերանսն ինտերակտիվ բնույթի էր, հնչեցին նաեւ հարցեր ու պատասխաններ:

Մինչ բուն քննարկմանն անցնելը «Հայ-հնդկական բարեկամություն» ՀԿ-ի նախագահ ու համահիմնադիր **Ռանանջայ Անանդը** հակիրճ ներկայացրեց կազմակերպության պատմությունը եւ առ այսօր Հայաստանում ու Հնդկաստանում նրանց կատարած աշխատանքները, որոնք եղել են ցուցահանդեսների, հայկական եւ հնդկական տոնակատարությունները նշելու եւ այլ միջոցառումների տեսքով:

Ռանանջայ Անանդի փոխանցմամբ՝ կազմակերպությունն ի սկզբանե ձեւավորվել է որպես ֆեյսբուքյան էջ, ու հենց սկզբից նպատակ է հետապնդում երկու երկրներում փոխադարձաբար ներկայացնելու երկու երկրների մասին տեղեկատվություն եւ իր մասով խթանելու հայ-հնդկական համագործակցությունը:

Հայաստանում Հնդկաստանի դեսպան դոկտոր **Սուրեշ Բաբուն,** որը նույնպես ներկա էր

կոնֆերանսին, շարունակելով հայ-հնդկական հարաբերությունների թեման՝ նշեց, որ Խորհրդային Միության փլուզումից հետո դրանք մտան նոր փուլ, եւ Հնդկաստանն առաջին երկրներից էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունն ու հիմնեց դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության հետ: Ի դեպ, մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հիմնադրման 20-ամյակը նշվեց անցյալ տարի: «Ամփոփելով վերջին 20 տարիների հայ-հնդկական հարաբերությունները՝ պետք է ասեմ, որ դրանք ընթանում են ճիշտ ուղղությամբ: Ունենք բաղաքական գերազանց փոխըմբռնում եւ փոխգործակցություն տարբեր մակարդակներով: Եվ հիմա աշխատում ենք փոխգործակցության այս ավանդույթն ընդլայնելու եւ առաջ տանելու ուղղությամբ», հավելեց Սուրեշ Բաբուն:

Հայաստանն ու Հնդկաստանն ունեն համագործակցություն նաեւ միջազգային տարբեր հարթակներում եւ աջակցում են մեկը մյուսի թեկնածուներին միջազգային կազմակերպություններում:

Ինչ վերաբերում է մշակութային կապերին, դեսպանի դիտարկմամբ՝ Հնդկաստանում հայկական մշակութային խմբեր հանդես եկել են, սակայն դրանց թիվը շատ չի եղել. «Կուզենայինք տեսնել ավելի շատ հայ կատարողների Հնդկաստանում, որոնք հանդես կգան հնդիկ հանդիսատեսի առջեւ՝ ներկայացնելով հայկական մշակույթը, քանի որ Հնդկաստանում Հայաստանի մասին ըստ պատշաճի տեղյակ չեն»:

Հայկական մշակույթը ներկայացնելու հարցում կարող են դեր խաղալ նաեւ հետաքրքրված կազմակերպությունները, տուրոպերատորները եւ ուրիշներ, որոնք, սակայն, պետք է փոքր-ինչ վճռական լինեն:

Սուրեշ Բաբուն խոսեց հատկապես առեւտրատնտեսական հարաբերությունների մասին՝ ընդգծելով, որ հայ-հնդկական հարաբերությունների շրջանում սա ամենաթույլ օղակն է, եւ կարիք ունի ամրապնդման ու զարգացման. «Թե մեր դեսպանատանը, թե մեր արտգործնախարարության ներսում մտածում ու խորհրդակցում ենք, թե ինչպես ընդարձակենք առեւտրատնտեսական մեր հարաբերությունները: Սրանք խորացնելու համար պահանջվում են հավելյալ ջանքեր ու լրացուցիչ խթանում»:

Այնպես չէ, որ որեւէ ոլորտում Հայաստանը չունի բավարար ներուժ համագործակցությունը զարգացնելու համար: Դեսպանն ասում է՝ հայերը ստեղծագործ են, խելացի եւ ունեն մտավոր բնատուր ուժ հիմնարար գիտություններում: Նրա դիտարկմամբ՝ աշխարհում Հայաստանն ունի լավագույն ուղեղները տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:

Հնդկաստանի դեսպանը հիշեցնում է՝ երբ Հնդկաստանը ձեռք բերեց իր անկախությունը, Խորհրդային Միությունն օգնեց Հնդկաստանին ոտքի կանգնելու, եւ Հայաստանը, լինելով Խորհրդային Միության երկրներից մեկը, նույնպես իր ավանդն է ունեցել Հնդկաստանի զարգացման մեջ: Այսօր էլ Հնդկաստանն է իր աջակցությունը ցուցաբերում է Հայաստանին, եւ դրա մի օրինակն էլ ITEC ծրագրով հայ մասնագետների վերապատրաստումն է Հնդկաստանում, ինչի համար ֆինանսական ծախսերը հոգում է հնդկական կողմը:

«Մենք շարունակելու ենք ցուցաբերել մեր աջակցությունը Հայաստանին՝ մեր համեստ ճանապարհով», եզրափակեց Սուրեշ Բաբուն:

Առեւտրատնտեսական հարաբերությունների մասով Արդյունաբերողների եւ գործարարների միության գործադիր տնօրեն **Էդուարդ Կիրակոսյանը** նշեց, որ միության անդամներն այսօր ունեն բիզնես համագործակցություն Հնդկաստանի հետ, եւ պատրաստակամ են ստեղծելու նոր կապեր հայ ու հնդիկ գործարարների միջեւ: Իսկ «Էսկուլապ» ընկերության արտադրանքի մենեջեր **Հարություն Սարաֆյանը** տեղեկացրեց, որ «Էսկուլապը» 1996 թվից աշխատում է հնդկական արտադրողների հետ. «Ու միգուցե այս կոնֆերանսը կտա անհրաժեշտ վստահություն հայ սպառողներին, քանի որ վերջիններս որոշակի թերահավատություն ունեն հնդկական դեղորայքի հանդեպ, այնինչ փորձը ցույց է տալիս, որ դրանք բնավ չեն զիջում տեղականին ու եվրոպականին»:

Համագործակցության վերաբերյալ Երեւանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր **Միխայել Նարիմանյանն** էլ իր առաջարկները ներկայացրեց՝ նախ ասելով, որ Պետական բժշկական համալսարանը բաց է առողջապահական ու բժշկագիտական հետազոտությունների համար: «Մենք հետաքրքրված ենք նաեւ ավելի շատ իմանալու հնդկական ավանդական բժշկության՝ յոգայի, այուրվեդայի մասին, եւ կուզենայինք ձեռք բերել գործնական գիտելիքներ ու հմտություններ դրանց վերաբերյալ», ասում է պարոն Նարիմանյանը: Ի հավելում վերջինիս առաջարկի՝ դեսպանը նշեց՝ Հնդկաստանի կառավարությունն առաջարկում է բակալավրի անվճար կրթություն հնդկական ավանդական բժշկություն սովորել ցանկացողներին»:

Հայ-հնդկական հարաբերություններին առնչվող այս կոնֆերանսը, ըստ Ռանանջայ Անանդի, թերեւս չլինի իրենց կողմից կազմակերպվող այս թեմայով վերջին կոնֆերանսը. «Արդեն պլանավորել ենք եկող տարի անցկացնելու միջազգային կոնֆերանս»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Խաղաղության կոչին Ադրբեջանում հակադրում են «մարդասպանների հերոսացումն ու խաղաղության կոչ անողների հետապնդումները»

*1-ին էջից*

Արտգործնախարարության հաղորդագրության համաձայն՝ Նալբանդյանը նաեւ նշել է. «Մենք բարձր ենք գնահատում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի ղեկավարների շարունակական ջանքերը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը»:

«Ինչպես եւ Միացյալ Նահանգները, Ռուսաստանը եւ Ֆրանսիան, մենք եւս ափսոսում ենք, որ համաձայնության ձեռքբերման փոխարեն, Բաքվի միակողմանի առավելություն կորզելու փորձերի պատճառով հնարավորություն չընձեռվեց առաջընթաց արձանագրելու 2011 թ. հունիսին Կազանի, 2011 թ. մարտին Սոչիի, 2010 թ. հոկտեմբերին Աստրախանի, 2010 թ. հունիսին Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովներում», ասել է Նալբանդյանը: Նրա խոսքերով, Հայաստանը ընդունում է եռանախագահների մոտեցումը, որ անթույլատրելի է խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջը շրջանակային պայմանավորվածության ձեռքբերման ձգձգումը:

Հայաստանը, ըստ արտաքին գերատեսչության ղեկավարի, շարունակում է վստահ լինել, որ վերջին չորս տարիների ընթացքում եռանախագահ երկրների ղեկավարների համատեղ հայտարարություններում ամրագրված դրույթները կարող են հիմք հանդիսանալ հիմնախնդրի արդար եւ տեւական խաղաղ կարգավորման համար, եւ «որ այդ դրույթները պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն, եւ դրանցից որեւիցե մեկին մյուսի նկատմամբ գերակայություն տալու փորձերն անհնարին կդարձնեն հիմնախնդրի կարգավորումը»:

Հայաստանը համաձայն է, որ ժողովուրդներին պետք է պատրաստել խաղաղության, այլ ոչ՝ պատերազմի: Սակայն, Նալբանդյանի խոսքերով. «Ցավոք, մինչ այսօր Ադրբեջանի ղեկավարությունը հակառակն է անում»: «Մենք լիովին համամիտ ենք համանախագահ երկրների՝ Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի ղեկավարների հետ, որ ուժի կիրառումը չի կարող հանգեցնել հակամարտության կարգավորմանը, եւ միայն բանակցությունների միջոցով կարելի է հասնել կայունության եւ խաղաղության հաստատմանը, ինչը նոր հնարավորություններ կբացի տարածաշրջանային համագործակցության եւ զարգացման համար», ասել է Հայաստանի ԱԳ նախարարը:

Նալբանդյանը մեկնաբանել է, որ, ի տարբերություն Ադրբեջանի, «որն ամեն առիթով կամ անառիթ հղում է անում միջազգային իրավունքի միայն մեկ սկզբունքին», Հայաստանը բազմիցս է արտահայտել եւ, ի պատասխան Էնիսկիլենում նախագահներ Վլադիմիր Պուտինի, Բարաք Օբամայի եւ Ֆրանսուա Օլանդի կոչին, եւս մեկ անգամ «վերահաստատում է իր հանձնառությունն առ միջազգային իրավունքի սկզբունքները, մասնավորապես՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման, եւ տարածքային ամբողջականության»:

Չնայած սադրիչ հռետորաբանությունից եւ գործողություններից զերծ մնալու վերաբերյալ միջազգային հանրության բազմաթիվ կոչերին, Ադրբեջանը, Նալբանդյանի խոսքով, շարունակում է իր ռազմատենչ հռետորաբանությունը եւ սադրանքներն Արցախի հետ շփման գծում եւ Հայաստանի հետ սահմանին, «մարդասպանների հերոսացումն ու խաղաղության կոչ անողների հետապնդումները, այլատյացության, անհանդուրժողականության եւ թշնամանքի քարոզչությունը, ինչը հանգեցնում է տարածաշրջանում իրավիճակի սրմանը եւ լարվածության աճին»:

Էնիսկիլենում համանախագահ երկրների ղեկավարների դարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ հայտարարությունը, Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարի մեկնաբանությամբ, կարող է խթան հանդիսանալ բանակցային գործընթացում առաջընթացի համար, եթե Ադրբեջանի ղեկավարությունը ճիշտ ընկալի եռանախագահ երկրների շեշտադրումները:

Նալբանդյանի մեկնաբանության մեջ հիշատակվող հայտարարության համաձայն՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան ափսոսանք են հայտնել, որ «դարաբաղյան հակամարտության կողմերը մինչ օրս չեն կարողանում բանակցային գործընթացում լուծել առկա խնդիրները»: Համանախագահող երկրների ղեկավարներ Վլադիմիր Պուտինը, Բարաք Օբաման եւ Ֆրանսուա Օլանդը Հայաստանին եւ Ադրբեջանին կոչ են արել «թարմացված էներգիայով կենտրոնանալ դեռեւս բաց մնացած հարցերի լուծման վրա»:

Հայտարարության մեջ նաեւ ափսոսանք է հայտնվում, որ «կողմերը բանակցային գործընթացում շարունակում են ձգտել միակողմանի շահ ստանալուն», ընդ որում, գործընթացի հետագա ձգձգումը համարվել է անընդունելի:

Այս ամենով հանդերձ, համանախագահող երկրների ղեկավարները հիշեցրել են, որ բանակցվող բոլոր սկզբունքները պետք է դիտարկվեն միասին, համատեղ, որպես մեկ ամբողջություն, քանի որ որեւէ մեկին գերակայություն տալը «բացառում է հավասարակշռված որոշման ընդունումը»:

Իսկ որպես գլխավոր մնում է այն, որ կողմերը իրենց ժողովուրդներին նախապատրաստեն խաղաղության, այլ ոչ՝ պատերազմի:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

## Սփիւռք

# Հալէպը եւ Սինկափուրի հայկական եկեղեցին

- Ի՞նչ կ՛անկալուի հովիւէ մը:

- Անշուշտ հօտին պաշտպանութիւնը նախ եւ առաջ:

Հովիւը նախ եւ առաջ հօտին պաշտպանն է, եւ զարմանալի պիտի ըլլար, եթէ ամէն ճիգ ի գործ չդնէր պահելու ամբողջ հօտը, եւ եթէ այդ հօտը որեւէ պաշտաճառով սկսած է տարտղնուիլ, ապա ինք պիտի փորձէ անպայման ետ հաւաքել բոլորը մէկ յարկի տակ, նոյնիսկ եթէ հօտին մէկ մասը հարազատ բայց «այլ» տան մը մէջ ապահով վիճակ ունի, որովհետեւ հովիւը ամէն պարագայի պարտաւոր է հօտին ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՆ մէջ փնտռել անոր հաւասական ապահովութիւնը...

Անշուշտ բոլորս, ամբողջ հայութեան մասին է խօսքը, մեր հաւասական ապահովութիւնը կրնանք գտնել միայն մեր հայրենիք Հայաստանի մէջ, սակայն ոչ ի գին գաղութներու խուճապահար փախուստին, որովհետեւ հարցը հոս միայն ՀԱՅ ԱԶԳԻ գոյատեւումը չէ, որն ապահովված է, փառք Աստուծոյ, որովհետեւ եթէ սփիւռքեան բոլոր գաղութներն ալ անէանան, Հայաստանի մէջ պիտի շարունակուի ազգին գոյատեւումը:

- Պէ՞տք է բոլորս հաւաքուինք Հայաստանի մէջ:

- Անշուշտ:

- Ուրեմն ինչո՞ւ այս աւելորդ «փիլիսոփայախօսութիւնը»:

- Մտորել փորձելուս առիթը Հալէպի (եւ ոչ միայն Հալէպի) Հայ Աւետարանական համայնքի համայնապետ Յարութիւն Սելիմեան վերջերս Հայաստանի «Առաջին Լրատուական»ի հետ ունեցած զրոյցի մը ընթացքին ըսածն էր.

«Պետք չէ քաջալերել սիրիահայերին, որ նրանք իրենց կյանքը շարունակեն Հայաստանում՝ թեկուզ երբեմն ընկերային կյանքի մեջ տկար չափորոշիչներով Սիրիայից դուրս: Նրանք պետք է վերադառնան Սիրիա, եւ սիրիահայությունը պետք է վերագտնի իր կենսունակությունը Հալեպում: Մեր եկեղեցիները, տները, գործարանները, դպրոցները պետք է վերականգնվեն, պետք է դուրս գալ «շատոգնության» հոգեբանությունից եւ ունենալ վերականգնողական հոգեբանություն...»:

Այս համարձակ եւ անկեղծ հրաւէր-մարտահրաւէր-արտայայտութիւնը ընդվզեցուցած էր շատեր: Ինչպէ՞ս թէ, Վերապատուելիին ո՞վ է որ ինքզինքին իրաւունք կու տայ առաջարկել սուրիահայերուն Հայաստանի մէջ չտեղաւորել:

- Բայց որո՞նք իրաւունք ունին համայնքներու ներկային եւ ապագային մասին առաջարկութիւններ ընել:

- Անշուշտ բոլորը, անոնց շարքին՝ նաեւ համայնապետերը:

Ինչպէս բոլոր ժողովուրդները, մենք հայերս ալ մեր ղեկավարներուն մօտ նախ եւ առաջ կը փնտռենք անձնական շահ, ահա թէ ինչու վերապատուելիին առաջարկը կը դիտուի այդ դիտանկիւնէն եւ խօսքը ընդհանրացուելով մեր ղեկավարները կը մեղադրուին իշխանամոլութեան մէջ.

Մօտաւորապէս կ՛ըսուի՝- «անշուշտ անոնք պիտի ուզեն, որ համայնքը մնայ, որպէսզի չկորսնցնեն իրենց իշխանութիւնը»...

- Եթէ քիչ մը աւելի լրջանանք, ասկէ միամիտ կարծիք դժուար թէ արտայայտենք: Սուրիահայ ղեկավարները (ոչ միայն եկեղեցական, առաւել եւս եկեղեցական), քիչ մը ամէն տեղ կրնան պահել իրենց դիրքն ու իշխանութիւնը, առաւել եւս ունենալ ապահով կեանք: Այստեղ պարզապէս հարկ կը տեսնեմ արձանագրել, որ մեր համայնքապետերը պայթող ռումբերուն դէմ նոյնպես ապահովուածութիւն մը չունին, անոնք կ՛ապրին իրենց ժողովուրդին հետ՝ կրակի գիծին վրայ, եւ իրենց ՎԱՐՔՈՎ ու ՕՐԻՆԱԿՈՎ կը գօտեմարտեն ժողովուրդը՝ խուճապի չեն մատնուիր, իրենց հետ նաեւ իրենց հօտը խուճապի չի մատնուիր: Պիտի արձանագրեմ նաեւ, որ երբ Վերապետուելին այս խօսքերը կ՛արտասանէր, իր դպրոցին դասասենեակներուն վրայ արկեր կ՛իյնային, դպրոցին մէջ, եկեղեցւոյ կից, իր բնակարանին մօտիկը... Իսկ ինք կը խօսէր եւ կը խօսի վերականգնումի մասին, եւ կ՛ուզէ որ վերականգնումի պահուն սուրիահայերը վերադառնան, վերականգնումի պահը երբ գայ, եւ ոչ թէ ԱՅՍՕՐ՝ երբ դեռ ռումբերը կը տեղան, երբ մեր տնտեսութիւնը քայքայուած է, իսկ մինչ այդ Սուրիա մնացած հայերը կը պահպանեն մեր ունեցուածքը: Այո՛, հոս մնացողները, որոնց մէջ քիչ չէ թիւը նաեւ անոնց, որոնք կրնային երթալ, բայց նախընտրեցին մնալ, եւ կ՛աշխատին իմաստաւորել իրենց հոս մնալը՝ տէր կանգնիլ փորձելով մեր ազգային արժէքներուն, մեր միութիւններուն, մեր դպրոցներուն, եկեղեցիներուն, կը փորձեն իրենց հոս մնալուն իմաստը գտնել նաեւ իրար օգնութեան ձեռք մեկնելուն մէջ...

Սուրիան՝ Հալէպը եթէ կորսնցնենք որպէս գաղութ, կորսուելու վտանգին առաջ կը կանգնի Սփիւռքի արեւմտահայ դիմագիծը. չէ՞ որ մանաւանդ լիբանանեան քաղաքացիական պատերազմէն ետք, Հալէպն է Արեւմտահայ Սփիւռքին (այսօր արդէն երկո՞ւ Սփիւռք կայ, երկրորդը Արեւելահա՞յ) մշտահոս հայկական արիւն ներարկողը Մայր գաղութն է մայրենիի ուսուցիչներ, թերթերու խմբագիրներ, հայախօս սերունդներ հասցնողը գրեթէ բոլոր գաղութներուն: Միւս կողմէ, խուճապահար Հայաստան տեղափոխուելով չենք կրնար սատարել Հայաստանի տնտեսական զօրացման, չե՞նք տեսներ, որ հայրենի պետութիւնը ապաստանեալ սուրիահայերուն բնակարանով ապահովելու համար կը դիմէ բարեգործներու եւ նուիրատուներու. չենք կրնար օգնել Հայաստանի մարդկային թիւի զգալի աճին նաեւ, որ ընդդիմադիր ուժերը՝ կրնանք ծանրացնել անոր արդէն ծանր տնտեսական վիճակը, որուն պատճառաւ ամէն տարի ամբողջ սուրիահայերուն քանակի չափով հայեր կը լքեն իրենց եւ մեր հայրենիքը:

Ահա պատճառներ, որոնք կը ստիպեն Վերապատուելիին ըսել, թէ Հայաստան ԱՊԱՍՏԱՆԱՇ եւ ոչ թէ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ սուրիահայերը պէտք է վերադառնան Սուրիա:

Ծայր աստիճան դժուարին տարի մը անցուցինք: Մեզմէ շատեր հեռացան, մեծ մասը Հայաստան, ուրկէ շատեր կը փորձեն հեռանալ դէպի եւրոպական երկիրներ: Ոչ մէկը այպանելու, մեղադրելու, կամ ոեւէ մէկ անհատի արարքը քննարկելու իրաւունք չունինք: Սակայն հաւաքական վարքագիծ մը պէտք է ունենանք, իսկ մեր հաւաքականութեան ղեկավարները, ինչպէս բոլորը, իրաւունք ունին իրենց մտածելակերպը բարձրաձայնելու:

Հարիւր տարի Սփիւռքի մէջ չենք յաջողած միասնական ռազմավարութիւն մը որդեգրել: Միակ դիւրինը՝ «դժուար է, անկարելի է» ըսելն է, աւելի դիւրինը՝ «որովհետեւ հեռատես ղեկավարներ չենք ունեցած» ըսելն է:

Մտորենք՝ այսօր սուրիահայութիւնը ըլլալ-չըլլալու պայքարի՞ մէջ է, երէկ իրաքահայութիւնն էր, լիբանանահայութիւնը... Վա՞ղը.. ո՞վ գիտէ: Միշտ անպատրաստ եղած ենք:

Դժուար, շատ դժուար տարի մը անցուցինք, բարեբախտաբար առանձին չէինք, աշխարհի ամբողջ հայութիւնը սուրիահայերուն հետ կը տառապէր, իսկ ամենաանուն գիշերները հաւանաբար մեր համայնքապետերը անցուցին...

Հիմա նստած եմ մեր դպրոցի բակին մէջ, աշակերտները, որոնք ամբողջ տարին արկերու պայթիւններու եւ փամփուշտներու սուլոցին տակ դպրոց յաճախեցին, իրենց հետ դպրոց բերելով լուսատու լապտերիկները... լիցքաւորելու դպրոցի ելեկտրականութիւն հայթայթող մեքենայէն (generator), որպէսզի գիշերը անոր աղօս լոյսին տակ կարենան քիչ մը դաս սորվիլ... Հիմա այդ աշակերտները աւարտելէ ետք պետական պրովէի քննութիւնները շուրջս նստած են եւ մենք աւարտական հանդէսի պատրաստութեան մէջ ենք... Կը նայիմ շուրջս, կը դիտեմ մեր դպրոցին եւ միութեան նորակառոյց հոյակապ շէնքը... Այսօր ինչպէս միշտ հզօր եւ ոչ թէ լալկան սփիւռք մը կրնայ ինչպէս հարկն է զօրավիգ կանգնիլ Մայր հայրենիքին, որուն բոլորս ալ նախապատուութիւն կու տանք անկասկած... Իսկ Հայաստան պէտք է երթանք, անպայմա՛ն, բայց պէտք է երթանք կազմակերպուած՝ որպէս ներգաղթող, որպէս հայրենադարձ... առանց թողլքելու մեր սեփական ինքնն ու ազգային հարստութիւնը...

**ՄԱՆՈՒԵԼ ՔԵՇԻՇԵԱՆ**
Հալէպ

## Թեշրան

# Ազգային-եկեղեցական ժողովի փոխարեն Բեյրութում կրկին կայացավ կուսակցական ժողով

**Հունիսի 12-15-ը, Անթիլիասում, Լիբանան, Արամ Ա կաթողիկոսի նախագահութեամբ կայացավ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության Ազգային ընդհանուր ժողովը:**

**Չորսօրյա ժողովի օրակարգի հարցերն էին.**

**ա- Ազգային կենտրոնական վարչության քաղաքական եւ կրոնական ժողովների գործունեության քննարկում,**

**բ- Քրիստոնեական դաստիարակություն,**

**գ- Հայեցի կրթություն,**

**դ- Հայ դաս,**

**ե- Երիտասարդություն,**

**զ- Միջեկեղեցական հարաբերություն:**

**Յուրաքանչյուր չորս տարին մեկ գումարվող սույն ժողովում Թեհրանի հայոց թեմն, ըստ կանոնադրության, ունենում է տասը ներկայացուցիչ, ովքեր պիտի ընտրվեն Թեհրանի հայոց թեմի պատգամավորական ժողովի կողմից: Սակայն, ինչպես անցյալում, Դաշնակցություն կուսակցությունը շարունակելով մենաշնորհական իր արտավը, արհամարհելով ժողովի համազգային բնույթը, թույլ չտվեց, որ ընդդիմադիր կողմից ոչ մի ներկայացուցիչ ընդգրկվի հիշյալ ցանկում՝ ստեղծելով զուտ կուսակցական կազմ, կարծես կուսակցության ընդհանուր ժողովի խնդիր կար եւ ոչ թե ազգային:**

**Երեւույթն այնքան տգեղ էր, որ անգամ կուսակցականները չհամբերեցին եւ «ընտրված» 10-ից 5-ը հրաժարվեցին, որից հետո, անձնափոխանորդներով հանդերձ, ընդամենը ութ հոգի Թեհրանից մեկնեց Անթիլիաս, որոնցից մեկը՝ Վարդան Վարդանյանը, ընդհանրապես կաթ չուներ ներկայացուցչական կազմի հետ եւ Լիբանան էր մեկնում Արամ Վեհափառի հրավերով, իսկ թե՝ ո՞ւմ հաշվին, մեզ հայտնի չէ: Մեզ հայտնի չէ նաեւ այն պարագան, որ Վեհափառը Վարդանյանին որպես իր անձնական հյո՞ւրն էր հրավիրել, թե՞ շրջանցելով ԹՀԹ պատգամավորական ժողովին՝ սեփական նախաձեռնությամբ փորձել էր լրացնել Թեհրանի կիսաս պատվիրակությունը: Նամանավանդ, որ հյուրի հանգամանքով Անթիլիասում գտնվող Վարդան Վարդանյանը, վերջում «ընտրվել է» որպես Ազգային ընդհանուր ժողովի Կենտրոնական վարչութեան Քաղաքական ժողովում Թեհրանի հայոց թեմի ներկայացուցիչ:**

**Այսպիսով, ամոթալիորեն, ընդամենը երկու ամիս առաջ ընտրված պատվիրակության կեսը հրաժարվում էր կատարել կուսակցության կողմից իրեն պարտադրվող առաքելությունը, իսկ այդ բոլորի գլխին ավելորդ բարդություն էր թեմական խորհրդի ատենապետ Էդվարդ Բաբախանյանի անհասկանալիորեն Անթիլիաս չմեկնելը, ինչը տարբեր մեկնաբանությունների առիթ էր տալիս եւ ամենից առաջ կրկին օրակարգ բերում Սրբազան հոր՝ Սեպուհ արք. Սարգսյանի եւ Դաշնակցության միջեւ առկա հակասությունների հարցը:**

**Կարեւոր է մատնանշել, որ Թեհրանի հայոց թեմի գործադիր մարմնի՝ թեմական խորհրդի անդամներից ոչ ոք չէր մասնակցում Անթիլիասում գումարված ազգային ժողովին:**

**Իսկ եթե Անթիլիասին ենթակա բոլոր թեմերն էլ Թեհրանի հայոց թեմի նման են ընտրել իրենց ներկայացուցիչներին ու նույն կերպ են նրանց ճամբել Ազգային ընդհանուր ժողով, ապա պիտի վկայել, որ նրանք լուրջ չեն վերաբերվում այդ ժողովին, որ այն ավելի շուտ ցուցադրական մի հավաք է, քան որոշակի նպատակ հետապնդող ժողով:**

**Համենայն դեպս, մեկ բան հստակ է, որ Թեհրանից Անթիլիաս ժամանած պատվիրակությունը չէր ներկայացնում թեհրանահայությանը, այլ, ընդամենը, նրա անունով ներկայացվող, մեծամասամբ կուսակցական մի խումբ:**

**Հիշատակված թեհրանահայ պատվիրակությունը, իր կամքից անկախ, անկարող էր առաջ քաշել այնպիսի հարցեր, որոնք հաշվի առնելով սփյուռքյան այժմու պայմաններն ու հրամայականները ու նաեւ առկա մարտահրավերները, Հայ ազգի ու եկեղեցու միասնության ամրապնդման նպատակով դրվեին սեղանի վրա, զոր օրինակ՝**

**ա- Հայաստանյայց առաքելական եկեղեցին վեր դասել որեւէ տեսակ խմբակային շահից եւ եկեղեցու նվիրյալներին հորդորել՝ ամենահիմնական առաքելությունը համարել ազգի զավակների միջեւ միասնության հիմքեր ստեղծելը եւ միասնություն քարոզելը:**

**բ- «Ամենայն հայոց» տիտղոսը Մայր աթոռ Ս. Էջմիածնի աներկբայելի մենաշնորհն է. մեկընդմիշտ վերջակետ դնել Անթիլիասի կողմից այդ տիտղոսը չարաշահելու հարցին՝ հայկական դաշտում եւ օտարների մոտ:**

**գ- Որոշակի եւ հստակ քաղաքականություն ճշտել եւ ծրագիր մշակել աղանդավորների քայքայիչ գործունեության դեմ պայքարելու համար:**

**դ- Հեռու աժանագին, լոզունգային մոտեցումներից, ՀՀ իշխանություններին պահանջներ ներկայացնել Հայաստանի կայունության ու զարգացման համար, մանավանդ ավերիչ արտագաղթը կասեցնելու ուղղությամբ:**

**ե- Հայ դասը համարել համահայկական մտահոգություն եւ գերհարց եւ այն զանազանել Դաշնակցություն կուսակցությունից եւ բարոյապես ու նյութապես պաշտպանել այդ ոլորտին նվիրված բոլոր անհատներից, կառույցներից ու կազմակերպություններից եւ հրաժարվել մինչ այժմ կատարվող խտական եւ հատվածական գործունեությունից:**

**Հիշեցնենք՝ ազգային ընդհանուր ժողովը Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության բարձրագույն մարմինն է եւ գումարւում է չորս տարին մեկ, ուր քննարկման են դրվում ազգային-եկեղեցական կյանքի հետ առնչվող հիմնահարցերը, գնահատական տրվում Ազգային կենտրոնական վարչության կրոնական եւ քաղաքական ժողովների չորսամյա գործունեությանն ու կաթողիկոսության ենթակա թեմերի գործադիր իշխանությունների կատարած գործունեությանը եւ ըստ այնմ կատարում իր թելադրություններն ու առաջարկությունները առաջիկա տարիների գործունեության համար:**

*«Արաքս» շաբաթաթերթ*
*«Իրանահայեր» լրատվական ցանց*
*«Համայնք» լրատվական կայքէջ*

# Վրաստանին նախանձելու եւս մեկ առիթ...

Հաճախ են հայաստանցիները որոշ ոլորտներ ու հանգամանքներ ոչ թե Ադրբեջանի հետ համեմատում, որ բյուջեի ծախսերի առումով նավթային միջոցներ է սպառում, այլ՝ Վրաստանի հետ, որտեղ հանրության զգալի հատվածին առնչվող շատ փոփոխություններ միանգամից ընկալվում են որպես մի բան, ինչ Հայաստանում հնարավոր չէ. օրինակ՝ ճանապարհային ոստիկանության «մաֆրազերծումը»:

Թե իրականում որ գործընթացներն ինչ ընթացք են ունեցել եւ ունեն Վրաստանում, այլ հարց է. տվյալ դեպքում կարեւոր է, որ հասարակության լայն զանգվածների առումով տեսանելի են փոփոխություններ, շատ դեպքերում՝ դրական: Մինչդեռ Հայաստանում ոչ փոփոխություններ են երեւում, ոչ էլ անգամ դրանց իրագործման մտադրությունն է հստակ:

Ինչեւէ, ռուս-վրացական հարաբերություններում բեկում նկատելու հիմքերը շատանում են, մի միջ էլ ավելացնելով Վրաստանին նախանձելու հիմքերը: Մասնավորապես, վրացական գինին արդեն իսկ հայտնվել է ռուսաստանյան շուկայում, ու որոշ հրապարակումների համաձայն, ոչ միայն ուրախացրել ռուս սպառողին, այլեւ տխրեցրել հայ գինեգործներին: Սակայն տվյալ դեպքում տխրություն ասվածը բավականին հայավարի է, քանի որ առողջ մրցակցելու ընդունակները ոչ թե մտահոգություն են արտահայտում, այլ պատրաստվում են մրցակցության:

Հիմա էլ մեկ այլ նախանձի թեմա է բացվելու հայերի համար, այս անգամ՝ օդային փոխադրումների առումով: Գաղտնիք չէ, որ, նախ, Ռուսաստան օդային ճանապարհով այցելելու համար Վրաստանից շատերն էին Երեւան հասնում, այդպիսով նպաստելով Երեւան-Մոսկվա չվերթերի ապահովմանը, թեեւ շատ այլ երկրներ ու քաղաքներ այցելությունը Թբիլիսիից շատ ավելի էժան կնստի ոչ միայն Վրաստանի, այլեւ Հայաստանի քաղաքացիների համար: Ու պատահական չէ, որ ներկա դրությամբ էլ գնի եւ բազմազանության առումով ամենագրավիչ տուրիստական առաջարկները հայաստանցիների համար ոչ թե Երեւանից են, այլ Թբիլիսիից:

Ռուսաստան-Վրաստան բանակցությունները, որ վարում են Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն եւ ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչը, հասել են մի հանգրվանի, երբ կողմերն արդեն քննարկում են ընդհատված տրանսպորտային հաղորդակցությունը վերականգնելու հարցը: Հետաքրքրական է, որ վրացի բանակցողը հարցը հենց այդպես էլ ներկայացրել է, թեեւ մանրամասնելիս անդրադարձել է միայն օդային հաղորդակցության խնդիրներին, սակայն բանակցության թեմա որպես ներկայացրել է ընդհանրապես տրանսպորտային հաղորդակցությունը:

Այդ մասին տեղեկացրել է նաեւ ռուսաստանյան կողմը՝ ներկայացնելով, որ շուտով երկու կողմերի համապատասխան գերատեսչությունների հանդիպումներ կլինեն՝ քննարկելու «տրանսպորտային հաղորդակցության, ամենից առաջ՝ օդային հաղորդակցության վերականգնմանն առնչվող հարցեր»:

Ու թեեւ վրացական կողմը նաեւ հայտարարել է «առավել կարեւոր հարցերի դեռ չլուծված մնալու» մասին, ակնհայտ է, որ տարբեր ոլորտներում նորմալ հարաբերությունների վերականգնումը ներկա պահին չի կապվում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի խնդիրների հետ, միեւնույն ժամանակ, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Վրաստանի համար առավել նպաստավոր պայմաններ են ապահովում հենց առեւտրային, հաղորդակցության ու այլ բնագավառներում գրանցվող փոփոխությունները:

Վ. Պ.

# Ղրիմի թաթարների հակազդեցությունը Հայոց ցեղասպանության բանաձեւին

Այդ մասին երեկ նշել է Նյու Յորքի «Թուրական» կայքէջը՝ հիմք ընդունելով Ռուսաստանում հրատարակվող «Հայկական երկրամաս» թերթի հրապարակումը: Թուրական կայքէջը այս թերթը համարում է «Ասպարէզի» ռուսաստանյան տարբերակը, ավելացնելով, որ Ղրիմի թաթարական խորհրդարանի նախագահ Մուստաֆա Ջեմիլօղլուն բուռն հակազդեցություն է ցուցաբերել Ուկրաինայի խորհրդարան ներկայացված Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի առնչությամբ:

Ըստ կայքէջի, Ջեմիլօղլուն, որը նաեւ Ուկրաինայի խորհրդարանի պատգամավոր է, մասնաբել է. «Եթե բանաձեւը խորհրդարանում հաստատվի, խորհրդարանի նախագահը հազիվ թե դա վավերացնելու հակում ցուցաբերի»: Նա բանաձեւը վերագրել է Ուկրաինայի խորհրդարանի «անմտությանն ու անառողջ դաստողությանը», ապա եւ շարունակել. «Ուկրաինայում թուրական ծագումով մարդիկ թվաքանակով զգալի գերազանցում են հայերին: Բանաձեւի հեղինակները պետք է ի վիճակի լինեն կանխատեսել դրա ընդունման հետեւանքները: Բանաձեւի անցկացումը կվտանգի Ուկրաինայի հարաբերությունները Ադրբեջանի, Թուրքիայի եւ թուրքալեզու մյուս ժողովուրդների հետ, եւ դա լուրջ հարված կհասցնի Ուկրաինայի արտաքին քաղաքականությանը»:

Ջեմիլօղլուն միաժամանակ զգուշացրել է ուկրաինական իշխանություններին, թե բանաձեւի ընդունումը ոչ թե կհանի երկրի թուրական ծագումով քաղաքացիներին:

Այս սպահակի նախազգուշացումը ոչ այլ ինչ է, քան սպառնալիք, որն էլ լկտիության ակնհայտ դրսեւորում է: Սակայն դա չպետք է մեզ զարմացնի. թաթարը հայաստյաց միեւնույն տականքն է՝ Ղրիմի, թե Կովկասի: Պարզապես ականջ է ծակում սրանց ոռնոցի բնույթ կրող ձայնակցումը:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

# Կիմ Չոն Ինը կօգտագործի Հիտլերի փորձը

**ԿԺԴՀ իշխանությունները սկսել են մանրազնին ուսումնասիրել գերմանացի նացիոնալ-սոցիալիստների փորձը, հաղորդում է New Focus International կայքէջը: Հյուսիսկորեացի ղեկավար Կիմ Չոն Ինին մասնավորապես հետաքրքրում է այն փաստը, թե Ադոլֆ Հիտլերի վարչակարգին ինչպես հաջողվեց կարճ ժամանակամիջոցում վերականգնել 1-ին աշխարհամարտում պարտված Գերմանիան:**

**ՉԺՀ տարածքում աշխատող հյուսիսկորեացի պաշտոնյաներից մեկը New Focus-ին պատմել է, որ Կիմ Չոն Ինը հունվարի 8-ին իր ծննդյան օրվա առթիվ Պաշտպանության պետական կոմիտեի անդամներին նվիրել էր Հիտլերի «Իմ պայքարը» գիրքը: Երրորդ Ռայխի առաջնորդի ինքնակենսագրական աշխատությունը արգելված է ԿԺԴՀ-ում, բայց սահմանափակ տպաքանակով հրատարակված է ընթերցողների նեղ շրջանակի համար:**

**Ենթադրվում է, որ Կիմ Չոն Ինին ոգեշնչում են մասնավորապես նացիոնալիստ-սոցիալիստների նվաճումները սպորտի տարածման եւ մանկածնության քաղաքաքաղաքության ասպարեզում: New Focus-ը նշում է, որ 2011-ին ԿԺԴՀ նոր ղեկավարի իշխանության գլուխ անցնելուց հետո պետական ԶԼՄ-ներում շատացել են մարզական հրապարակումները, իսկ ինքը՝ ղեկավարը, հաճախ է հանրությանը ներկայանում երեխաներով շրջապատված: Նաեւ հաղորդվում է, որ ԿԺԴՀ ժողովրդական անվտանգության նախարար Չխվե Պու Իլը ենթականերին հրամայել է օրինակ վերցնել հիտլերյան Գերմանիայի գաղտնի ոստիկանությունից՝ գեստապոյից:**

**New Focus-ի տվյալներով, հյուսիսկորեական կառավարող վերնախավի շրջանակներում Կիմ Չոն Ինը արդեն դաժան քաղաքական գործչի համբավ է ձեռք բերել: Մեկ ուրիշ լավատեղյակ աղբյուր լրագրողներին հայտնել է, որ Կիմ Չոն Ինը Հիտլերի ժառանգության հանգամանորեն ծանոթացել է Շվեյցարիայում ուսանելու տարիներին:**

ՀԱՄԱՅՆԵՑԻ ԵՎ ՀԵՌԱԽՈՍԻ ԳԱՂՏՆԱԼՍՈՒՄ

# Օբաման հանդես եկավ լրտեսման ծրագրերի պաշտպանությամբ

*Պեկինը պաշտոնապես բացատրություն պահանջեց Վաշինգտոնից*

**Նախագահ Բարաք Օբաման հանդես է եկել ԱՄՆ Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԳ) պաշտպանությամբ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Նրա խոսքերով, ԱԱԳ համացանցային եւ հեռախոսային լրտեսման ծրագրերը չեն հակասում սահմանադրությանը:**

**PBS հեռուստալիքին տված հարցազրույցում Օբաման հայտարարել է, թե ԱԱԳ գործունեությունը «թափանցիկ» է, իսկ օտարերկրյա հատուկ ծառայությունների վերահսկման դաշնային օրենքին համապատասխան ստեղծված մասնագիտացված դատարանը ապահովում է քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը եւ զսպման ու հակակշիռների համակարգի պահպանումը: Դռնփակ գործող հենց այդ դատարանն էր թույլատրել ԱԱԳ սկանդալային ծրագրերի կիրառությունը:**

**Հարցազրույցի ժամանակ Օբաման խոստովանել է, որ լրտեսումը միշտ չէ, որ արդարացված է: Մասնավորապես ԱԱԳ ծրագրերն անհրաժեշտ չէին 2009-ին պակիստանցի Նաջիբուլլաի Ջազիի մերկացման ժամանակ, որը նախապատրաստում էր ահաբեկչություններ Նյու Յորքի մետրոյում:**

**Ավելի վաղ հենց Ջազիի դեպքն էր մատնանշել ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենը, որը օրերս լրատվամիջոցներում բացահայտել էր այդ հատուկ ծառայությունների համացանցային լրտեսման եւ հեռախոսազրույցների գաղտնալսման ծրագրերը:**

**ԱՄՆ իշխանությունները գաղտնի տեղեկությունների հրապարակման մեղադրանքով քրեական գործ են հարուցել ներկայումս Հոնկոնգում գտնվող Սնոուդենի դեմ: Ի դեպ, հունիսի 17-ին համացանցային կոնֆերանսի ընթացքում «Գարդիան» թերթի ընթերցողների հարցերին պատասխանելիս Սնոուդենն ասել է, որ այսուհետեւ նույնիսկ իր լռությունը չի կանխի ամերիկյան հատուկ ծառայությունների գործունեության նորանոր մերկացումները: «Հիմա կարող եմ միայն ասել, որ ԱՄՆ կառավարությանը չի հաջողվի ինձ բանտարկելու կամ սպանելու միջոցով թաքցնել այդ ամենը: Ճշմարտությունը կբացահայտվի, եւ դա անհնար է կանգնեցնել», հայտարարել է Սնոուդենը: Ըստ որում, նա վճռականորեն մերժել է այն ենթադրությունը, թե ինքը կհամագործակցի ՉԺՀ հետախուզության հետ: ԱՄՆ-ից իր փախուստը նա բացատրել է այն փաստով, որ ինքը չի հավատում արդար դատավարությանը:**

**«Ֆիգարո» թերթի կայքէջը հունիսի 18-ին հաղորդեց, որ Էդվարդ Սնոուդենի բացահայտումներից հետո առաջին անգամ Չինաստանը սկսել է ԱՄՆ-ից հարիվ պահանջել վերջինիս կիբեռնետիկական լրտեսության փորձերի համար: ՉԺՀ արտգործնախարարության խոսնակը հայտարարել է, որ Վաշինգտոնը «պարտավոր է հաշվի առնել միջազգային ընկերակցության հարցումները եւ անհրաժեշտ բացատրությունը տալ»:**

Պ. Ք.

# Աֆղանական բանակը հունիսի 19-ից ստանձնում է բոլոր գործողությունները

Աֆղանստանի բանակը հունիսի 19-ից իր վրա է վերցնում երկրում բոլոր ռազմական գործողությունների իրականացումը: Այդ մասին հայտարարել է նախագահ Համիդ Կարզայը, ավելացնելով, որ առաջիկա ամիսներին ՆԱՏՕ-ի ուժերը աստիճանաբար կհեռանան երկրից եւ կփոխարինվեն անվտանգության ազգային ուժերով:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ սա լիազորությունների փոխանցման վերջին՝ 5-րդ փուլն է, որը շրջադարձային պահ է Աֆղանստանի վերջին 12 տարվա պատմության մեջ:

Ներքին խնդիրներին անդրադառնալով՝ Կարզայը նաեւ նշել է, որ մոտ ժամանակներս Աֆղանստանի խաղաղության բարձրագույն խորհրդի պատվիրակությունը Քաբար կմեկնի «Թալիբան» շարժման ներկայացուցիչների հետ հաշտության բանակցություններ վարելու:

Իր հերթին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը հայտարարել է, որ կոալիցիոն ուժերը անհրաժեշտության դեպքում «ռազմական օգնություն ցույց կտան», բայց «չեն ծրագրի, չեն ղեկավարի եւ չեն իրականացնի ռազմական գործողություններ»: Նրա խոսքերով, Աֆղանստանում իրենց առաքելությունը կավարտվի մինչեւ 2014-ի վերջը:

«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ»

## «Անրի Վերնոյ» ցուցահանդես՝ Մարսելում

Ֆրանսիայում «Ֆրանս-հայկական գերազանցության շաբաթ» միջոցառումների շրջանակներում կայացավ «Անրի Վերնոյ» ցուցահանդեսի բացումը:

Հունիսի 17-23-ը Ֆրանսիայի Մարսել քաղաքում սփյուռքի նախարարությունը «Terre d'Armenie» կազմակերպության եւ մի շարք գերատեսչությունների կողմից կազմակերպում է «Ֆրանս-հայկական գերազանցության շաբաթ» միջոցառումների շարք, որոնք կհեռարձակվեն Մարսելի հայկական «ARARAT TV» ուղիղ եթերով:

«Ֆրանս-հայկական գերազանցության շաբաթվա» շրջանակներում սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ մեկնարկեց նաեւ լիբանանահայ Մովսես Հերկելյանի եւ հայ նկարիչների նվիրաբերած նկարների ցուցահանդես-վաճառքը, որը կտեւի մինչեւ հունիսի 23-ը եւ նկարների վաճառքից ստացված ողջ հասույթը կտրամադրվի սիրիահայերի համար նոր թաղամասի կառուցման աշխատանքներին:

Իսկ «Միսրալ» սրահում կայացավ «Անրի Վերնոյ» ցուցահանդեսի հանդիսավոր բացումը, որին մասնակցեցին Կլաուդիա Կարդինալեն, Օմար Շարիֆը, Ժակի Ներսեսյանը, Նաթալի Ռուսելին, Իզաբել Սադոյանը եւ Հայաստանից ժամանած պատվիրակությունը:

Մ. Հ.

## Հարություն Կալենցի գործերը՝ Գաֆեսճյան արվեստի կենտրոնում

Վաղը Գաֆեսճյան արվեստի կենտրոնի «Արծիվ» սրահում կբացվի Հարություն Կալենցի «Գույնը ձեւի մեջ» ցուցահանդեսը: Ցուցադրությունն ընդգրկում է գեղանկարչական եւ գրաֆիկական աշխատանքների ընտրանի «Կալենց» թանգարանից եւ անց է կացվում կենտրոնի միջթանգարանային համագործակցության շրջանակներում:

## Արվեստի ամրակուռ կամուրջ Սփյուռքի եւ Հայաստանի միջեւ

*Ձախից աջ՝ Սրամ Սարգսյան, Մայք Վայեճյան, ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյան*

Արամ Սարգսյանին ճանաչում եմ 1996 թվից, երբ արդեն քայքայվում էր Սփյուռքահայության հեռ մշակութային կառի կոմիտեն, որ տասնամյակներ շարունակ վիթխարի աշխատանքներ իրականացրեց, որպես ամրակուռ կամուրջ աշխարհասարած Սփյուռքի եւ Մայր հայրենիքի միջեւ:

Ուղղակի կարելի է հիանալ ու զարմանալ հայ արվեստին ու գեղանկարչությանը, քանդակագործությանը անվերապահ նվիրված Արամի Սարգսյանի վրա, որ այդ մութ ու մռայլ օրերին, ծրագրեց ֆինանսական եւ հոգեբանական ահռելի վիճակի մեջ հայտնված Մայր հայրենիքի կերպարվեստի վարպետներին կապել Սփյուռքի հետ: Այդ տճաջան աշխատանքը, անկոտրում կամքը՝ հասնելու իր նպատակներին, հաջողությամբ պսակվեց, երբ Արամ Սարգսյանի ու գործընկերների երազանքը իրականություն դարձավ «ԱՐԱՄԵ» պատկերասրահի ստեղծումով:

Այսօր, ինքնատության սլաքներ եւ բամբասանք շրտելը «ԱՐԱՄԵ»-ի գործունեության մասին, Սփյուռքի զանազան գաղթօջախներում, խիստ անշնորհակալ աշխատանք է: Իսկապես, Լիբանանի թե Մերձավոր Արեւելքի համար այս խառնաշփոթ օրերին, Արամ Սարգսյանը եւ «ԱՐԱՄԵ»-ի Լիբանանի եւ արաբական երկրների ներկայացուցիչ Մայք Վայեճյանը, իրենց կազմակերպած ցուցահանդեսներով, «Արեւելքի Փարիզ» Բեյրութի շքեղ պատկերասրահներում՝ նաեւ մարդկային եւ արվեստագիտական բնագավառներում, անգնահատելի դեր խաղացին հայ արվեստի հանդեպ սերը լիբանանահայության թե տարբեր երկրներից ժամանած հյուրերի ուրերում վառ պահելու համար: «ԱՐԱՄԵ» պատկերասրահի կողմից ցուցադրված հայ կերպարվեստի մեծագույն վարպետների՝ արվեստասեր հասարակությունը ծանոթացավ նոր սերնդի տաղանդաշատ գեղանկարիչներին, որոնց վաճառված ստեղծագործությունները հազիվ թե փակեին շքեղ պատկերասրահների եւ փառավոր շնորհահանդեսների ծախսերը, որոնց նպատակն էր օտար շրջանակներին եւս ծանոթացնել հայ հին թե նոր կերպարվեստի նվաճումները:

Հիվանդագին խանդը, «տակ փորելը», նվիրյալներին քարկոծելը միշտ էլ եղել են հայ իրականության անբուժելի ախտերն ու արատները: Սակայն, մենք՝ Սփյուռքի արվեստասերներս ի ուրտե նորանոր հաղթանակներ ու նվաճումներ ենք ցանկանում «ԱՐԱՄԵ»-ին՝ շարունակելու իր առաքելությունը՝ հանուն հայ կերպարվեստի տարածման:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ

Բեյրութ

## Լույս է տեսել

«Անտարես» հրատարակչությունը տեղեկացնում է, որ «Պարտադիր ընթերցանություն» շարքից լույս է տեսել «Կամելիազարդ տիկինը» վեպը:

Այն ֆրանսիացի դրամատուրգ, բանաստեղծ եւ վիպասան Ալեքսանդր Դյումա որդու անունը միանգամից հանրաճանաչ դարձրեց ամբողջ աշխարհում: Փարիզյան կուրտիզանուհի Մարգարիտ Գոթիեի ողբերգական կյանքի պատմությամբ՝ Դյումա որդին վեր էր հանում հասարակության քաղաքական նախապաշարումների պատճառով խորտակվող ճակատագրերի դրաման:

# Ավետիս Յափուճյանի երեք հանգրվանները

Կահիրեի ՌԱԿ պաշտոնաթերթ «Արեւի» նախկին երկարամյա խմբագիր, այժմ արդեն ավելի քան 20 տարի Ավստրալիայում հաստատված, ՀԲԸՄ-ի «Միութիւն» ամսաթերթի հայրենի բաժնի խմբագիր դոկտ. Ավետիս Յափուճյանն իր կյանքի երեք կարեւոր փուլերը ամփոփել է մի գրքույկում, որին տվել է «Կեանքէս ճակատագրական երեք հանգրուաններ» խորագիրը (մատենաշար «Արեգ»-3, Սիդնի, 2012):

Վաթսունութ էջից բաղկացած պրակը բացվում է իր կյանքի ընկերուհու՝ Անժել Միրզայանի հետ նախ նշանադրության (23 օգոստոս, 1959) եւ ապա ամուսնության (29 նոյեմբեր, 1959) ծանուցումներով: Այնուհետեւ այդ զույգ առիթներով տարբեր հաստատություններին կատարված նվիրատվություններն ու ընկերական շրջանակի շնորհավորագրերն են ներկայացված: Վերջում առաջին հանգրվանի ամփոփիչ տողերով դոկտ. Յափուճյանի խոսքն է, որտեղ խոստովանում է. «Կեանքի ընկերուհիի մը փնտռտուքի ընթացքին, կեանքն ու ժամանակը հաստատեցին, թե սխալած չէի իմ ընտրութեանս մէջ, քանի որ իմ կեանքի թանկագին ընկերուհիիս սահմանազանց համբերատարութեան, անհուն զոհաբերութեան, խոր հասկացողութեան շնորհիւ էր, որ ես կարողացայ բարձրանալ կեանքի սանդուխն ի վեր»:

Երկար տարիների կրթական փորձառություն ունեցող կողակիցը՝ Անժել Միրզայանը Կահիրեի Մերձանյան եւ Գալուստյան ազգային վարժարանների սիրված ուսուցչուհիներից է եղել եւ Ավստրալիա տեղափոխվելուց հետո շարունակել է պաշտոնավարել ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկեան» շաբաթօրյա վարժարանում մինչեւ թոշակի անցնելը: Ավետիս եւ Անժել Յափուճյանները բախտավորվել են երկու՝ Արեգ եւ Մարո զավակներով, որոնք իրենց հերթին ծնողներին պարգեւել են հինգ թոռնիկներ:

Յափուճյանի կյանքի երկրորդ հանգրվանը պատմական գիտությունների թեկնածուի (արտասահմանում՝ դոկտորի) գիտական աստիճան ստանալն է մայր հայրենիքում: Գրքի այս բաժինը հագեցած է երախտագիտական անկեղծ զգացումներով հանդեպ ի թիվս ուրիշների, ինչպես ինքն է բնութագրում «մեծ մարդուն եւ մեծ հայուն»՝ ակադեմիկոս Ռուբեն Զարյանին եւ նրա ընտանիքին: Այստեղ Յափուճյանը ներկայացնում է պատմագիտությամբ զբաղվելու առաջին մղումներից մինչեւ Երեւանում 1973-74 թվերին պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու դժվարություններով առլեցուն ժամանակաշրջանը, իր խոստերով՝ ոդիսականը: Ընտրված թեման է եղել (ղեկավար՝ դոկտ. պրոֆ. Վարդան Պարսամյան) «Թրքական արշավանքը Հայաստան եւ Բաքուի պայմանագիրը»:

Հայտնի մտավորականի կյանքի երրորդ հանգրվանը Ավստրալիա տեղափոխությունն է 1990 թվին, որտեղ սկզբնական շրջանի հոգեկան ընկճվածության պրոցեսներից հետո, իր իսկ խոստովանությամբ «գրելու իմ անյագ տենչանքս յագուրդ գտած ըլլալով՝ «Միութիւն» ամսաթերթին սիւնակներուն մէջ, հոգեկան բաւարարուածութեամբ կ՚ապրիմ... ծերութեանս օրերը կ՚անցընեմ երիտասարդական հոգիով ու ափսոսով՝ տեւաբես գրելով եւ կարդալով»:

Գրքույկի վերջին էջերում Ավստրալիա մեկնումի առթիվ Կահիրեում տարբեր մշակութային հաստատությունների իրեն ի պատիվ տրված ողջերթի ընդունելությունների նկարագրականներն են եւ բարեկամների նրան ուղղված խոսքերը:

Ինչպես ճշմարիտ փաստերն են գերակայում Յափուճյանի երկու տասնյակից ավելի գիտական աշխատություններում («Հայ ժողովուրդի մեծ գոյամարտը եւ Հայաստանի Հանրապետութիւնը պրկացնողները», «Արեւմտահայաստանի կորուստը եւ անոր պատասխանատուները», «Եւ վերածնաւ հայ ժողովուրդը հուրէն ու սուրէն» եւայլն), այնպես էլ այս գրքույկում գերիշխում են ճշմարտախոսությունն ու շիտակությունը:

Յափուճյանը անկեղծ է ե՛ւ իր գովասանքներում, ե՛ւ իր պարսավանքներում: Մաղձ չկա նույնիսկ իրեն հալածողների հասցեին: Նա իր խոսքերն ավարտում է շնորհակալական խոսքերով ուղղված բոլոր նրանց, ովքեր սատար են կանգնել իրեն իր կյանքի ողջ ընթացքում:

Երկար կյանք եւ քաջառողջություն նրան:

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

## Լոնդոնում հանդիսավորությամբ նշվել է Մանուել Ադամյանի գրական գործունեության 50-ամյակը

Լոնդոնի Սուրբ Եղիշե եկեղեցու դահլիճում, Հայ առաքելական եկեղեցու Անգլիայի թեմի առաջնորդ Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի, Լոնդոնում ՀՀ ժամանակավոր հավատարմատար Արա Մարգարյանի, Հայաստանից ժամանած արվեստագետների եւ համայնքի գրասեր հասարակության ներկայությամբ տեղի է ունեցել բանաստեղծ, թատերագիր Մանուել Ադամյանի գրական գործունեության 50-ամյակին նվիրված հանդիսություն: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Հայաստանի գրողների միությունից, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանն իր բացման խոսքում ընդգծել է Ադամյան գրողի եւ մշակութային գործչի դերակատարությունը, արժեւորել նրա տեղը արդի հայ գրական ընտանիքում:

Օրվա գլխավոր բանախոս, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը բնութագրել է գրողի ստեղծագործության հատկանիշները եւ արժանիքները: Նա ընդգծել է գրական-մշակութային գործունեության կողքին Մանուել Ադամյանի կրթական առաքելությունը. 1971 թ. Երեւանից վերադառնալով Բեյրութ՝ նա նշանակվում է Սահակյան վարժարանի տնօրեն, ապա աշխատում Երվանդ Հյուսիսյան հայագիտական հիմնարկում: Գրականագետն անդրադարձել է նաեւ գրողի ազգային-քաղաքական տիպարին: Պարելով Մերձավոր Արեւելքում՝ բեյրության հայկական հորձանուտի մեջ, նա եղել է հնչակյան «Արարաս» թերթի խմբագիրներից մեկը: Լիբանանյան քաղաքացիական հյուծիչ պատերազմների ընթացքում նաեւ զենք է վերցրել՝ պաշտպանելու հայի հայրենիքին, ծայրահեղական ուժերը նույնիսկ նրան առեւանգել են, եւ հրաշքով կենդանի է մնացել: Լոնդոնյան շրջանում նա շարունակել է ստեղծագործական բեղուն առօրյան, բնականաբար նաեւ հասարակական-մշակութային գործունեությունը: Այստեղ նա հիմնել է «Կոչնակ» երկաբաթաթերթը, իսկ ահա 15 տարի անընդմեջ հրատարակում է «Նոր սերունդի ձայն» ամսագիրը, որտեղ կարողանում է համադրել հայության հին ու նոր սերունդների նվիրաբերումը ազգային կյանքին:

Հաճելի անակնկալ էր Մանուել Ադամյանի «Հավատքի որդին» պիեսից փոքրիկ հատվածի բեմադրությունը (բեմադրիչ՝ Ռուբեն Քոչար), մասնակցությամբ հայաստանցի արվեստագետներ Հարություն Մովսիսյանի, Նարինե Քոչարի եւ այլոց: Հարություն Մովսիսյանն ընթերցել է նաեւ Ադամյանի բանաստեղծություններից: Ալեքսանդր Սոլենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի մենեջերուհի Գայանե Գրիգորյանը ներկաներին խանդավառել է Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Արտեմի Այվազյանի երգերի, «Անուշ» օպերայից հատվածների կատարումով:

Թեմի առաջնորդը Գարեգին Բ Վեհափառ հայրապետի կողմից գրողին է հանձնել «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանը: «Իմ Հայաստան» փառատոնի մշակութային բաժնի պետ Լաուրա Ավետիսյանը բանաստեղծին է հանձնել ՀՀ Սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալը, իսկ 2010թ. Մանուել Ադամյանը ՀՀ նախագահի կողմից արժանացել է նաեւ «Մովսես Խորենացի» մեդալի: Երեկոն ավարտվել է Մանուել Ադամյանի երախտագիտական խոսքով:

Հաջորդ օրը ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը «Գրիգոր Նարեկացու կարեւորագույն դասը» թեմայով դասախոսություն է կարդացել Լոնդոնի հայ համայնքի ներկայացուցիչների համար:

«Արմենպրես»

# Մարզական

# Աբրահամը դժգոհ է պարգեւավճարից եւ պատռնում է ավարտել կարիերան

2-րդ միջինքաշային կարգում պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամը հավանաբար հրաժարվի օգոստոսի 24-ին Նամիբիացի Վիլբերֆորս Շիհեպոյի հետ կայանալիք մենամարտից: Նա դժգոհ է այն պարգեւավճարից, որը պետք է ստանա մենամարտելու համար:

«Եթե Sauerland Event-ը համաձայնության չգա փաստաբանիս հետ, ապա չեմ մենամարտի ո՛չ օգոստոսի 24-ին, ո՛չ էլ հետագայում: Կարող եմ կարիերաս ավարտել թեկուզ այժմ: Մարզիկների հետ հարկավոր է արդար լինել: Մինչեւ հարցի լուծումը կշարունակեմ մարզումներս», հայտարարել է Արթուր Աբրահամը:

Բանն այն է, որ Գերմանիայի Շվերին քաղաքում կայանալիք բռնցքամարտի երեկոյի գլխավոր մենամարտը լինելու է Յուրգեն Բրեմերի հանդիպումը, այլ ոչ թե Աբրահամ-Շիհեպո մրցամարտը: Ուստի գերմանական ARD հեռուստաալիքն էլ ավելի մեծ հետաքրքրություն է դրսեւորել առաջին մենամարտին, քան հայ բռնցքամարտիկի մասնակցությամբ հանդիպման հանդեպ: Ի դեպ, այդ հեռուստաալիքը ցանկություն չուներ ցուցադրելու Արթուր Աբրահամի եւ Ռոբերտ Շտիգլիցի 3-րդ մենամարտը:

# Ռոման Ամոյանը Մարիուպոլի մրցաշարի հաղթող

Ուկրաինայի Մարիուպոլ քաղաքում անցկացված ընտրամարտի միջազգային մրցաշարում հաջող են հանդես եկել հայ ընտիրները: Նրանցից բոլորից հաջող հանդես եկավ մեր փոքրաքանակ ընտիր, Եվրոպայի նախկին չեմպիոն Ռոման Ամոյանը, որը մինչեւ 55 կգ քաշային կարգում հաղթող ճանաչվեց: Մինչեւ 66 կգ քաշայիններ մրցավեճում Գեւորգ Սահակյանը զբաղեցրեց 2-րդ տեղը, իսկ Ռաֆիկ Մանուկյանը (74 կգ) եւ Սարգիս Տոնոյանը (96 կգ) դարձան բրոնզե մեդալակիրներ:




Այս մրցաշարում հունահռոմեական ոճի ընտրամարտի Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Զուլֆալակյանը հնարավորություն էր տվել ուժերը փորձելու նաեւ երիտասարդներին: Իսկ ահա Եվրոպայի կրկնակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը (96 կգ) եւ Լոնդոնի օլիմպիադայի փոխչեմպիոն Արսեն Զուլֆալակյանը (74 կգ) մրցաշարին չմասնակցեցին:

# Խաղարկվեցին անվանի սամբիստի հուշամրցաշարի պարգեւները

Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի ու սամբոյի եւ ձյուդոյի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի համատեղ ջանքերով անցկացվեց ընտրամարտի ձեւերից Հայաստանից առաջին աշխարհի չեմպիոն Գառնիկ Հովհաննիսյանի 18-րդ ավանդական միջազգային հուշամրցաշարը:

Ըստ քաշային կարգերի հաղթողներ դարձան Լենդրուշ Զաքիկյանը (48 կգ), Դավիթ Խաչատրյանը (52 կգ), Մաքսիմ Մանուկյանը (57 կգ), Գոռ Մալյանը (62 կգ), Մարտին Միրզոյանը (68 կգ), Ռաֆիկ Մանուկյանը (74 կգ), Միհեր Կարապետյանը (82 կգ), Էդիկ Պետրոսյանը (90 կգ), Տարոն Մելքոնյանը (100 կգ) եւ գերծանրքաշային Արմեն Լեւոնյանը:

Գառնիկ Հովհաննիսյանը հայ ճանաչված սամբիստներից է: Նա սամբոյի աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճել էր 1981-ին Մադրիդում: Նշենք, որ մինչ այդ մեր մարզիկներն ընտրամարտի ձեւերից եւ ոչ մեկում նման հաջողության չէին հասել: 1983-95-ին Գառնիկ Հովհաննիսյանը սամբոյի եւ ձյուդոյի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցում աշխատել է որպես սամբոյի բաժանմունքի ավագ մարզիչ: Արցախյան շարժման տարիներին՝ 1989-1994-ին մի շարք անվանի մարզիկների հետ աղահովել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջաններին մասնակցող Հայաստանի եւ Արցախի պատգամավորների անվտանգությունը Մոսկվայում: 1995-ին նա դժբախտ պատահարի զոհ դարձավ:

# Բենզեմային եւ Ռիբերիին 3 տարվա ազատազրկում է սպառնում

Ֆրանսիայի հավաքականի կիսապաշտպան Ֆրանկ Ռիբերիին եւ հարձակվող Քարիմ Բենզեմային մինչեւ 3 տարվա ազատազրկում է սպառնում անչափահաս մարմնավաճառի հետ սեռական հարաբերության մեջ մտնելու համար: Օրինապահ մարմինները պարզել են, որ Ռիբերին 2009-ին 2 անգամ օգտվել է մարմնավաճառ Զախիայի ծառայություններից: Առաջին հանդիպման ժամանակ նա նրան 700 եվրո է վճարել, իսկ 2-րդ դեպքում Զախիան Ռիբերիին անվճար է սպասարկել: Ռիբերին չի թաքցնում իր կապը Զախիայի հետ, սակայն պնդում է, որ իրենց հարաբերությունները հիմնված չեն փողի վրա: Բենզեման էլ կասկածվում է 2008-ին նույն աղջկա հետ սեռական կապ ունենալու մեջ: Բնականաբար, 2 ֆուտբոլիստներն էլ իրենց մեղավոր չեն համարում:

# Հոլկինսի հետ մենամարտում Կարո Մուրադին կփոխարինի Կովալյովը

Այն բանից հետո, երբ Կարո Մուրադին ԱՄՆ-ի մուտքի վիզա չտրվեց եւ Բեռնարդ Հոլկինսի հետ նախատեսված մենամարտը չեղյալ համարվեց, IBF-ի ղեկավարությունը պարտադրել է ամերիկացի բռնցքամարտիկին աշխարհի չեմպիոնի տիտղոսը պաշտպանել ռուսաստանցի Սերգեյ Կովալյովի հետ մրցապայքարում: Մինչեւ հուլիսի 17-ը կողմերը պետք է համաձայնության գան մենամարտի անցկացման պայմանների հարցում: Հակառակ դեպքում մենամարտի կազմակերպման համար մրցույթ կհայտարարվի: IBF-ի ղեկավարությունն արգելել է 2 բռնցքամարտիկներին այլ մրցակիցների հետ հանդիպել, մինչեւ նրանք չմրցեն միմյանց հետ:

Սերգեյ Կովալյովը աշխարհի չեմպիոնի կոչման պարտադիր հավակնորդ դարձավ վերջերս՝ հաղթելով ամերիկացի Կոռնելիուս Ուայտին:

# Հայնկեսն ու Մեսին լավագույնն են

Գերմանական հանրահայտ «Կիկեր» պարբերականը հարցում է անցկացրել ընթերցողների շրջանում՝ որոշելու աշխարհի լավագույն մարզչին եւ ֆուտբոլիստին: Հարցման արդյունքներով լավագույն մարզիչ է ճանաչվել Մյունխենի «Բավարիայի» գլխավոր մարզիչ Յուպ Հայնկեսը, իսկ լավագույն ֆուտբոլիստ՝ «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին:

Հայնկեսին իրենց ձայնն են տվել հարցվածների 60,5 տոկոսը: 2-րդ տեղում Դորտմունդի «Բորուսիայի» գլխավոր մարզիչ Յուրգեն Կլոպն է (21,8 տոկոս): Լավագույն եռյակը եզրափակել է «Չելսիի» նորանշանակ գլխավոր մարզիչ Ժոզե Մուրինյուն (7,7 տոկոս), որն անցած մրցաշրջանում գլխավորում էր Մադրիդի «Ռեալը»:

Մեսին ստացել է ձայների 67,4 տոկոսը: 2-րդ տեղում Քրիստիանու Ռոնալդուն է (11,7 տոկոս): 3-րդ հորիզոնականը զբաղեցնում է «Բավարիայի» կիսապաշտպան Բաստիան Շվայնշտայգերը (7 տոկոս):

ՖՈՒՏԲՈԼ

# Մխիթարյանը բուժզննում կանցնի «Լիվերպուլում»

Daily Mirror-ի տեղեկացմամբ, երեկ Հենրիխ Մխիթարյանը պետք է ժամաներ Լիվերպուլ, որտեղ թիմի կազմում բուժզննում պետք է անցնի: «Լիվերպուլի» գլխավոր մարզիչ Բրենդան Ռոջերսը հույս է հայտնել, որ առաջիկա օրերին Մխիթարյանի հետ պայմանագիր կկնքվի:

Bleacher Report-ի փոխանցմամբ, Հենրիխ Մխիթարյանը հրաշալի արագություն եւ խաղարկողի որակներ ունի. «Եթե «Լիվերպուլը» չվաճառի Լուիս Սուարեսին եւ գնի Հենրիխ Մխիթարյանին, ապա այդ զույգը կարող է մեծ բարդություններ ստեղծել մրցակիցների համար: Մխիթարյանը շատ է տեղաշարժվում խաղադաշտում, մշտապես ազատ գոտիներ է ստեղծում խաղընկերների համար: Եթե գործարքը կայանա, ապա «Լիվերպուլը» կհամալրվի երիտասարդ եւ տաղանդավոր հարձակողական ոճի ֆուտբոլիստով, որը հսկայական օգուտ կբերի թիմին»:

# Ոչ-ոքի առաջատարի հետ մրցավեճում

Դիլիջանում ընթացող շախմատի Գրան պրիի 3-րդ տուրում էլինա Դանիելյանը սպիտակներով հաշտություն կնքեց մրցաշարի առաջատար Նանա Ջագնիձեի հետ: Էլինան 3 տուրից հետո վաստակած 1 միավորով 5 շախմատիստուհիների հետ եզրափակում է աղյուսակը: Իսկ Ջագնիձեն 2,5 միավորով պահպանեց միանձնյա առաջատարի դիրքը:

Հաշտություն կնքեցին նաեւ Հարիկա Դրոնավալին ու Օլգա Գիրյան, Աննա Ուշենինան ու Համպի Կոներուն, Բելա Խոթենաշվիլին եւ Աննա Մուզիչուկը: Անտուանետա Ստեֆանովան հաղթեց Տատյանա Կոսինցեւային, Թուվշինթուգս Բաթչիմեգը պարտության մատնեց Վիկտորիա Չմիլիտեին: 2-ական միավորով առաջատարին հետաքնդում են Մուզիչուկը, Կոներուն, Բաթչիմեգը եւ Ստեֆանովան:

4-րդ տուրում Դանիելյանը սեւերով կմրցի Օլգա Գիրյայի հետ:

# Հայերից ամենաբարձրը Տիգրան Պետրոսյանի ցուցանիշն է

Բուլղարիայում վերջնագիծը հասել շախմատի «Զոլոտիե պեսկի» մրցաշարը, որի մասնակիցների թվում էին հայ 5 շախմատիստներ: Նրանցից առավել հաջող հանդես եկավ Տիգրան Պետրոսյանը, որը 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով զբաղեցրեց 13-րդ տեղը: Ավարտական 2 տուրերում Տիգրանը հաշտություն կնքեց Դրագիսա Բլագոեւիչի հետ եւ հաղթեց Ալեսանդրո Բոնաֆեդեին: Պետրոսյանն ընդամենը մեկ միավորով հետ մնաց մրցաշարի հաղթող Նիլս Գրանդելիուսից: 7-ական միավորով հաջորդ տեղերը զբաղեցրին չեխ Զբինեկ Հրաչեկը, ռումինացի Վլադիսլավ Նեւեդնիչնին, մակեդոնացի Վլադիմիր Գեորգիեւը եւ հնդիկ Վենկատեշը:

5,5-ական միավորով համապատասխանաբար 42-րդ եւ 47-րդ տեղերը զբաղեցրին Դավիթ Պառավյանն ու Ավետիք Գրիգորյանը: Պառավյանը շատ հաջող էր մեկնարկել եւ գտնվում էր առաջատարների շարքում, սակայն հետագայում ռուսաստանցի շախմատիստն անհաջող ելույթներ ունեցավ: Վերջին 2 տուրերում նա 1,5 միավոր վաստակեց՝ ոչ-ոքի խաղալով Մոհամատրա Սիդհանտի հետ ու հաղթելով Թամազ Մգելաձեին: Ավետիք Գրիգորյանն էլ հաշտություն կնքեց Վալենտին Փանբուկչյանի հետ եւ պարտության մատնեց Կլաուս Ֆրիդրիխսին:

Բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 5 միավորով հանգրվանեց 92-րդ հորիզոնականում: Նա պարտվեց Ռոման Սկոմորոխինին եւ հաղթեց Եգե Կոկսալին: Բուլղարիան ներկայացնող Վալենտին Փանբուկչյանը 4,5 միավորով զբաղեցրեց 102-րդ հորիզոնականը:

# Լեւոն Արոնյանը կմասնակցի չորսի մրցաշարին

Լեւոն Արոնյանը կմասնակցի սեպտեմբերի 9-15-ը ԱՄՆ-ի Սենթ Լուիս քաղաքում անցկացվելիք «Սինկֆիլդի գավաթի» խաղարկությանը: Նրա մրցակիցները կլինեն ՖԻԴԵ-ի դասակարգման ցուցակի առաջատար Մագնուս Կառլսենը եւ ԱՄՆ-ի առաջատար 2 շախմատիստներ Հիկարու Նակամուրան ու Գատա Կամսկին: Մրցաշարը կանցկացվի 2 շրջանով: Մրցանակային հիմնադրամը 170 հազար դոլար է:

Ամերիկացի գործարար Ռեքս Սինկֆիլդը վերջին 4 տարիներին արժանանում է ԱՄՆ-ի շախմատի ֆեդերացիայի հատուկ մրցանակին շախմատում ունեցած մեծ ներդրման համար: Նրա ջանքերով Սենթ Լուիսում հիմնվել է շախմատի ակումբ եւ ուսումնական կենտրոն:

# 9 առաջատար

Ջերմուկում ընթացող շախմատի Կարեն Ասրյանի հուշամրցաշարի 2-րդ տուրից հետո միանգամից 9 շախմատիստներ՝ Հովհաննես Գաբուզյանը, Լեւոն Բաբուջյանը, Արթուր Չիբուխչյանը, Հրանտ Մելքումյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Դավիթ Հարությունյանը, Ռոբերտ Աղասարյանն ու Արման Միքայելյանը 2 միավորով գլխավորում են մրցաշարային աղյուսակը:

2-րդ տուրում ուշադրության կենտրոնում է Չիբուխչյանի պարտիան մրցաշարի ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող մասնակցի՝ Եվգենի Պոստնիի հետ: Խաղն ավարտվեց հայ շախմատիստի հաղթանակով: Հրանտ Մելքումյանը պարտության մատնեց Լիլիթ Մկրտչյանին, Ռոբերտ Հովհաննիսյանը հաղթեց Դավիթ Քալաշյանին:

2-րդ տուրն էլ շատ արդյունավետ էր: 27 պարտիաներից միայն 8-ում մրցակիցները հաշտություն կնքեցին:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

# Օրվա հետքերով

# Սեւանն արդեն «մեռնող» լիճ չէ

«Երկու լուր Սեւանա լճից, մեկը՝ լավ, մյուսը՝ վաս»: Հենց այսպես սկսեց հանդիպումը լրագրողների հետ Սեւանա լճի հիմնախնդիրների հանձնաժողովի նախագահ **Վլադիմիր Մովսիսյանը**՝ հավելելով, որ վաս նորությունը լճում կենսաբազմազանության եւ ձկնային պաշարների կտրուկ անկումն է: Մովսիսյանի գնահատմամբ՝ ցուցանիշները մտահոգիչ են: Ձկան էնդեմիկ տեսակի՝ իշխանի կտրուկ նվազման կամ վերացման պատճառը ձվադրման վայրերի պակասն է. այս առումով հանձնաժողովը կառավարությանն առաջարկելու է, որ Սեւան մտնող գետերի վրա կառուցված 8 ՀԷԿ-երն աշխատեն ձվադրմանն օգնող ռեժիմով:

Դա նշանակում է, որ նախ ՀԷԿ-երը պետք է պարտադիր ունենան ձկնթող հարմարանքներ եւ գարնանն ու աշնանն աշխատեն այնպիսի ռեժիմով, որ ձկները կարողանան ձվադրել: Թեպետ էնդեմիկ տեսակների արհեստական վերտադրությունն ու այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները կարող են որոշակի դրական արդյունք ապահովել, սակայն դա կենսաբազմազանության վերականգնման առումով չի կարող էական խնդիր լուծել:

Միայն ՀԷԿ-երի աշխատանքը չէ, որ պատճառ է դառնում Սեւանում ձկան պաշարների նվազմանը: Որսագողությունը շարունակում է մնալ արդիական խնդիր, եւ այս առնչությամբ Մովսիսյանն առաջարկել է 3 տարով արգելել ձկան արդյունաբերական որսը: Սակայն կառավարությունը մերժել է՝ հիմնավորմամբ, որ կառաջանա կտրուկ սոցիալական լարվածություն: «Ես բերեցի մեկ թիվ, որ Գեղարքունիքի մարզում բնակվում է 260.000 մարդ, իսկ անօրինական ձուկ որսալով, վերամշակելով եւ վաճառելով զբաղվում է 1704 մարդ: Հիմա 1704 մարդը պետք է ախորժակը սանձի եւ հասկանա, որ այդ ձուկը վերականգնվում է իրենց համար: 3 տարի հետո նրանք կարող են 15 անգամ ավելի որս կատարել»:

Բացասական լուրերին զուգահեռ՝ հանձնաժողովը Սեւանի հարցում հասել է նաեւ հաջողությունների: Տարիներ շարունակ լիճը համարվում էր մեռնող: Այսօր լճի կարգավիճակը փոխվել է եւ մեռնող վիճակից դարձել է վերականգնվող: Ամենամեծ ձեռքբերումներից մեկն էլ Սեւանի մակարդակի բարձրացումն է: Այսօր հասել է 1960 թ մակարդակին, եւ ըստ կանխատեսումների, 2013-ի վերջին լճի մակարդակը կկազմի 1900մ 25 սմ նիշ կամ ավելի քան 15 սմ-ով բարձր նախորդ տարվանից:

Ինչպես նախորդ տարի, այս տարի էլ կառավարությունը որոշել է ոռոգման նպատակով Սեւանից բաց թողնել մինչեւ 170 միլիոն խորանարդ մետր ջուր (նախորդ տարի Սեւանից բաց էր թողնվել 317 միլիոն խորանարդ մետր ջուր): Ըստ Մովսիսյանի՝ որքան էլ բարձրացնեք ջրի մակերեսը, կարեւորը ջրի մաքրության ապահովումն է: Սեւանի ջրի լուսաթափանցելիությունը նախկինում 30 մետր է եղել, մինչդեռ այսօր 8-11 մետր է: Այս առնչությամբ Մովսիսյանը կարեւորեց, որ Արարատի ոսկու գործարանը Սոթք չի տեղափոխվելու, բացի դրանից, միջոցառումներ կան՝ ուղղված ափամերձ տարածքների մաքրմանը: Թեպետ այս առումով դրական տեղաշարժ կա, սակայն Վ. Մովսիսյանն արդյունքներից դեռեւս գոհ չէ:

Վ. Մովսիսյանի փոխանցմամբ՝ լճի մակարդակի բարձրացման հետեւանքով ջրածածկ են լինելու 4717 շենք-շինություններ, որոնց 78 տոկոսը շարժական են՝ երկաթյա, փայտյա տնակներ: Այսօրվա դրությամբ ապամոնտաժված են 359 շենք-շինություններ. գործընթացը շարունակական է լինելու: Ջրածածկ կլինեն նաեւ 3100 հեկտար անտառ եւ 1192 հեկտար թփուտներ: Այսօրվա դրությամբ մաքրվել է 1152 հեկտար անտառ:

Հ. Հ.

# Հայկական կոնյակին նվիրված նամականիշ

Մարվել եւ շրջանառության մեջ է դրվել Հայաստանում կոնյակագործության հիմնադրմանը նվիրված նամականիշ: Մարման արարողությանը ներկա էին ՀՀ տրանսպորտի եւ կապի փոխնախարար Անդրանիկ Ալեքսանյանը, «Հայփոստ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանը, պաշտոնատար այլ անձինք, հյուրեր:

Նամականիշի վրա պատկերված են կոնյակով լի բաժակ, խաղողով զամբյուղ եւ հին քանդակ, որին պատկերված են թագավորական զգեստով երկու տղամարդ՝ խմիչքի գավաթները ձեռքներին:

Նամականիշի հեղինակն է Վահագն Մկրտչյանը: 300 դրամ անվանագին ունեցող այս նամականիշը տպագրվել է Ֆրանսիայի Կարսնր (Cartor) տպարանում՝ 40 000 տպաքանակով:

Սա հայկական խմիչքներին նվիրված ավանդական շարքի շարունակությունն է. 2001թ. արդեն թողարկվել է նամականիշ՝ նվիրված գարեջրագործությանը, իսկ այս տարի թողարկվելու է նամականիշ՝ նվիրված հայկական գինեգործությանը:

Հայաստանում կոնյակի արտադրությունը հիմնադրվել է 1887թ., եւ լավագույն ավանդույթներով շարունակվում է մինչ օրս:

«Հայփոստ թրաստ մենեջմենթ» Բ.Վ.-ն եւ «Հայփոստ» ՓԲԸ-ն շարունակում են հայկական ֆիլատելիայի զարգացման քաղաքականությունը:


## Վաճառվում է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

## ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:




ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

# Տուգանքներ եւ նախազգուշացումներ անբարեխիղճ մրցակցողներին

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը երեկ տուգանեց համակարգչային տեխնիկայի իրացմամբ զբաղվող «Այ թի մաստեր» եւ Nout.am ընկերությունները սպառողներին մոլորեցնելու համար: Քաղաքացիները դժգոհել են, որ այս ընկերությունները գովազդում են այնպիսի ծառայություններ, որոնք չեմ մատուցվում: Nout.am անվանումով համակարգչային տեխնիկայի խանութ-սրահի մուտքի մոտ փակցված է գովազդային վահանակ՝ «Ապառիկ տեղում միայն անձնագրով, 0 տոկոս կանխավճար» բովանդակությամբ: Սակայն հանձնաժողովի դիտանցմամբ պարզվել է, որ դա իրականությանը չի համապատասխանում: «Այ թի մաստեր» ընկերությունն էլ հաճախորդներին չի տրամադրում համակարգիչներ այն պայմաններով, ինչպիսիք ներկայացնում է գովազդում: Ընկերությունների նման վարքագիծը հանձնաժողովը որակեց որպես անբարեխիղճ մրցակցության դրսեւորում եւ յուրաքանչյուրին տուգանեց օրենքով նախատեսված առավելագույն պատժաչափով՝ նախորդ տարվա հասույթի 1 տոկոսի չափով:

Հաջորդը հարցն առնչվում էր նորաստեղծ ընկերության կողմից սպառողներին մոլորեցնելուն՝ «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերության կատարած աշխատանքները վերագրելով իրեն: Հանձնաժողովին է դիմել վերոնշյալ ընկերության նախկին համահիմնադիր Արամ Հարությունյանը: Նա հայտնել է, որ 2009 թվականին իր, Ֆրանսիայի քաղաքացի Սեւակ Սերոբյանի եւ Աշոտ Առաքելյանի կողմից ստեղծվել է «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերությունը՝ համապատասխանաբար 34, 33 եւ 33 տոկոս բաժնեմասերով: Գործունեության երկու տարիների ընթացքում ընկերությունը իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնց թվում նաեւ «Գոհար» եւ «Հայաստանի աստղերը» համերգային ծրագրերի կազմակերպումը: Սակայն հիմնադիրների միջեւ ծագած անհաշտության արդյունքում, 2013-ի փետրվարին կայացվել է ընկերությունը լուծարելու որոշում: Ըստ Արամ Հարությունյանի, հիմնադիրներից մեկը՝ Աշոտ Առաքելյանը, ստեղծել եւ գրանցել է «Դոմինո Փրոդաքշն» ընկերություն եւ համատեղ հիմնադրված ու արդեն լուծարման փուլում գտնվող «Դոմինո Վիդեո Փրոդաքշնի» կատարած բոլոր գործերն ու մրցանակները վերագրել է իր ընկերությանը: Փաստորեն, ըստ դիմումատուի, սուտ տեղեկատվության միջոցով օգտագործվել է «Դոմինո Վիդեո Փրոդաքշնի» բարի համբավը: Հանձնաժողովը դա համարեց հասարակության մոլորեցում, ինչը անբարեխիղճ մրցակցության դրսեւորում է: Ուստի, «Դոմինո Փրոդաքշն» հանդեպ նույնպես կիրառվեց տուգանք՝ նախորդ տարվա հասույթի 1 տոկոսի չափով, հանձնարարելով 1 շաբաթվա ընթացքում վերացնել հայտնաբերված խախտումները:

«Բարի Սամարացի», «Քրաուն Քեմիքալ» եւ «Պոռչյանի կոնյակի գործարան» ընկերություններն էլ հանձնաժողով էին դիմել իրենց ապրանքների կեղծման հարցով:

Քիմիական ապրանքներ արտադրող «Քրաուն Քեմիքալը» տեղեկացրել է որ շուկայում հայտնվել են «Քրաուն Գոլդ» անվանումով քիմիական ապրանքներ, որոնց պիտակները արտաքնապես գրեթե չեն տարբերվում իրական արտադրողի արտադրատեսակներից: Պարզվել է, որ «Քրաուն Քեմիքալ» ընկերության երկու նախկին աշխատակից հիմնադրել են նոր ընկերություն եւ թույլ տալով անբարեխիղճ մրցակցության գործողություն, «Քրաուն Գոլդ» ապրանքային նշանով փորձում են մտնել շուկա:

«Բարի Սամարացի» ընկերությունը տեղեկացրել է, որ հանդիպել է անբարեխիղճ մրցակցության գործողության, որն իրականացվում է նույն ապրանքային շուկայում գործող ընկերության կողմից: Խոսքը վերաբերում է մասնավորապես «Էրզրում» ընկերության կողմից «Բարի Սամարացի նրբահամ եփած երշիկ» եւ «ECO PICANT ERZRUM ԷՐԶՐՈՒՄ» անվանումով երշիկների արտադրությանը: Վերոնշյալ ապրանքային նշանները «Բարի Սամարացի» ընկերության կողմից գրանցված են մտավոր սեփականության գործակալությունում, ինչը նշանակում է, որ որեւէ այլ ընկերություն իրավունք չունի օգտագործելու դրանք:

«Պոռչյանի կոնյակի գործարանն» էլ հայտնել էր, որ շուկայում հայտնվել են իր ապրանքային սեփականությունը հաղիսացող հուշանվերային շշերով լցված կոնյակներ, որոնք իրացվում է «Բերդաձոր» ապրանքային նշանի ներքո:

Այլ ընկերությանը պատկանող ապրանքային նշանի օգտագործումը օրենքի խախտում է, քանի որ կարող է առաջացնել շփոթություն իրական արտադրողի գործունեության կամ առաջարկվող ապրանքի նկատմամբ: Նկատի ունենալով, որ վերոնշյալ երեք դեպքում էլ օրենքի խախտում թույլ տված ընկերությունները ընդունել են իրենց մեղքը եւ վերացրել խախտումը, հանձնաժողովի որոշեց խիստ նախազգուշացում կիրառել՝ հետագայում խախտումները բացառելու հանձնարարականով:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սոնրագրուած է տպագրութեան 18.6.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: